

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՓԱՐԻԶԻ 1920 ԹՈՒԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Դ. ՆԻՍՏԻՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ

vatcheg@gmail.com

2004ին Երեւանի մէջ Հայաստանի Ազգային Արխիւին կողմէ հանրութեան ներկայացուցաւ հաստատութեան այդ օրերու տնօրէն դոկտ. Ամատունի Վիրաբեանի պատասխանատու խմբագրութեամբ եւ իր ու Գոհար Աւագեանի, Ռոժենտ Գրիգորեանի եւ Ալբերտ Կիրիմեանի միատեղ ջանքերով կազմուած *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920թթ.)* խորագրով եւ *Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու* ենթախորագրով հատորը, որ կրնար շահիլ արեւմտահայերէնին տիրապետող մասնագէտի մը մասնակցութենէն անոր սրբագրութեան:

Հակառակ տեղ-տեղ թոյլ տրուած լեզուական անհարթութիւններու, հատորը կը մնայ գերազանցապէս օգտակար եւ արժէքաւոր հրատարակութիւն մը:

Զարմանալիօրէն, սակայն, հոն կայ կարեւոր բացակայ մը՝ 5 Մայիս 1920ին Փարիզի մէջ Գաբրիէլ Նորատունկեանի նախագահութեամբ ըսկսած Ազգային համագումարի երկրորդ նստաշրջանի Դ. նիստին ատենագրութիւնը:

Այդ նիստի ընթացքին է որ կատարուած է Պօղոս Նուպարի նախագահութեամբ գործող Հայ ազգային պատուիրակութեան (ՀԱՊ) միամեայ համարատուութիւնը, որ կը վերաբերի Ազգային համագումարի Ա. նստաշրջանէն ետք (Փետրուար 1919) մասնաւորաբար ՀԱՊի, բայց նաեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան (ԱՀՊ) կատարած գործունէութեան:

ԱՀՊն կազմուած էր Նուպարի գլխաւորած ՀԱՊի եւ Աւետիս Ահարոնեանի գլխաւորած Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան (ՀՀՊ) անդամներով՝ խաղաղութեան խորհրդաժողովին առջեւ հայկական պահանջները միասնաբար որպէս մէկ մարմին ներկայացնելու եւ այդպիսով այդ պահանջներուն նկատառման հաւանականութիւնը բարձրացնելու նպատակով:

Վերը նշուած հատորին մէջ, Գ. նիստի (19 Մայիս 1920) ատենագրութեան կը յաջորդէ Ե. նիստինը (22 Մայիս 1920), որուն օրակարգին մէջ կը կարդանք. «1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան մասին»:

Յստակ է թե՛ համարատուութիւնը ներկայացուած է նախորդ՝ Դ. նիստին, ուր նաեւ սկսած է համարատուութեան քննարկումը:

Այս հրապարակումը, ուրեմն, կը նպատակադրէ ներկայացումը բացակայ ատենագրութեան. անոր առնչուող նիւթերը տակաւին վերջերս ձեռք բերած ըլլալով Հայաստանի Ազգային Արխիւէն, ուր տարիներ առաջ Փարիզէն դրկուելով ի պահ դրուած է մէկ մասը ՀԱՊի դիւանաթուղթերուն (Ֆոնդ 430):

Հրատարակուող նիւթը կարելի է անով որ ընդհանուր գիծերով կը ներկայացնէ հայ ժողովուրդի պատմական բախտորոշ շրջաններէն մէկուն զուգադիպող եւ Սեւրի դաշնագրին նախորդող շրջանին միացեալ ամբողջական Հայաստանի մը ստեղծման ուղղութեամբ տարուած աշխատանքներու համարատուութիւն մը, որ նաեւ խարխսխը կը կազմէ նոյն նիստին սկսած եւ Ե., Զ., Է. նիստերով շարունակուած քննարկումներու (*Համահայկական...*, էջ 533-53):

Նաեւ՝ ան կը լրացնէ բաց մը, առանց որուն թերի կը մնան Ե. եւ յաջորդող նիստերու ընթացքին կատարուած քննարկումներն իրենց յղումներով: Օրինակ, Ե. նիստի «1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան» բաժնին առաջին պարբերութիւնն իսկ անհրաժեշտ կը դարձնէ բացակայ ատենագրութեան հրապարակումը: Հոն կ'ըսուի. «... Տիար Թէքէեանի կողմէ երէկուան նիստին եղած առարկութիւնը մտքի շփոթութիւն պատճառեց» եւայլն (*Համահայկական...*, էջ 533):

Այստեղ լոյսին բացուող նիւթերու բնագրերը կը գտնուին ՀԱՊի նշեալ Ֆոնդ 430ի ցուցակ 1ի 54էն 57 համարակիր գործերուն կամ թղթապանակներուն մէջ:

54րդ «գործ»ը կ'ընդգրկէ սակաւաթիւ հպումներով մաքրագիր ամբողջական տեղեկագիր մը «Տեղեկագիր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Գործունէութեան (1919 Ապրիլ – 1920 Մայիս)» խորագրով:

55րդ «գործ»ը կը պարունակէ Դ. նիստէն միայն օր մը առաջ պատրաստուած համարատուական տեղեկագրի ֆրանսերէն բնագրին հայերէն տարբերակը, որուն ստեղծումը վստահուած էր չորս անձի՝ Թէքէեան, Արամ Անտոնեան, Արտուազդ Հանըմեան եւ Արշակ Զօպանեան, ինչպէս նշած է Անտոնեան:

56րդ «գործ»ի կողքերուն տակ կը գտնուի թերպահպանեալ եւ Անտոնեանի ձեռագրով մաքրագիր ատենագրութիւնը. իսկ 57րդ «գործ»ին վերապահուած է ընդունարանն ըլլալ դարձեալ Անտոնեանի ձեռագրով սեւագիր ատենագրութեան, որմէ դուրս կը մնայ համարատուական տեղեկագիրը եւ ուր կը հանդիպինք քննարկումներու մեկնարկին՝ յետ տեղեկագրի ընթերցման:

Որպէս հիմք ընդունելով 56րդ «գործ»ի վաւերագիրը, զայն ամբողջացնելու ծառայեցուցած ենք միւս երեք «գործ»երու նիւթերը:

Դիտել պետք է տանք թէ «Պատուիրակութիւն» բառը միշտ չէ որ յստակօրէն կ'առնչուի ՀԱՊի կամ ԱՀՊի: Նոյնութեամբ պահպանած ենք անհետեւողական գլխագրումներն ու օտար անուններու տառադարձումները, ինչպէս նաեւ զանազան տարբերակներով ներկայացող կարգ մը եզրեր, ինչպէս՝ մանտա եւ հոգատարութիւն, Ազգերու Ընկերութիւն կամ Ընկերակցութիւն եւ Դաշնակցութիւն, Խաղաղութեան Համաժողով կամ Վեհաժողով եւ Խորհրդաժողով, որոշապէս հետեւանք՝ թարգմանութեան հարկադրանքէն յառաջացած շտապողականութեան եւ թարգմանութիւնը չորս անձերու վստահուած ըլլալու իրողութեան:

Նկատի ունենալով նիւթին ծաւալն ու համարատուական ամփոփիչ բընոյթը, խուսափած ենք ծանօթագրութիւններով զայն ծանրաբեռնելու եւ ընդարձակելու փորձութենէն:

[Բ. ՆՍՏԱՇՐՋԱՆ]¹

ՆԻՍՏ Դ.

Ուրբաթ, 21 Մայիս 1920, ժամը 3ին².

Նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի

Ներկայ էին 18 պատգամաւոր

Եղիշէ Արքեպ. Դուրեան, ՊՊ. Աղաթօն պէյ, Տօքթ. Արմենակ] Բարսեղեան, Դաւիթ-Բէկ (Մարտիրոս Սարգիսեան), Ալեւտիս] Թէրզիպաշեան, Վլահան] Թէքէեան, Բրօֆ. [Կարապետ] Թումայեան, Արտաւազդ] Հանըմեան, Պօղոս պէյ Մըսրուրը, Տօքթ. [Յակոբ] Նեվրուզ, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Պօղոս Նուպար փաշա, Արշակ] Չօպանեան, Գրիգոր] Սինապեան, Մարտիրոս] Տէրպէտէրեան, Նշան] Տէր-Ստեփանեան, Տիրան] Տէօվլէթեան, Գառնիկ] Ֆնտզեան:

Մասնաւոր հրաւերով ներկայ էին նաեւ Զաւէն Պատրիարք [Տէր Եղիայեան], Գերապայծառ [Յովհաննէս] Նազլեան եւ Պ. Տիգրան Զայեան:

¹ Նշուած՝ սեւագիր օրինակին մէջ (ՀԱՀ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 57), ուր նաեւ արձանագրուած է. «Վաւերացուցաւ 28 Մայիս 1920[ին]»: Ինչպէս յետ վաւերացման մաքրագրումը, այնպէս ալ սեւագրութիւնն իր ուղղումներով - որոնք տրամաբանական է ենթադրել թէ կատարուած են վաւերացման նպատակով սեւագիր ատենագրութեան ընթերցման պահուն - թուղթին կատարած է Անտոնեան: Սեւագրին եւ մաքրագրին բոլոր տարբերութիւնները չէ որ պիտի նշուին յետագայ շարադրանքին մէջ: Նշենք նաեւ թէ սեւագիր օրինակին մէջ, ներկաներու խօսքերն արձանագրելէ առաջ, Անտոնեան պարզապէս նշած է. «Տեղեկագիր Ազգ. Պատու. Համարատութիւն Ազգ. Պատուիրակութեան միամեայ գործունէութեան»:

² Սեւագիր օրինակին մէջ՝ 3¼ին:

ՕՐԱԿԱՐԳ

1.- Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան³:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Ընթերցում ատենագրութեան.

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Մայիս 19-ի նիստին ատենագրութիւնը:

Ժողովին որոշման համեմատ, Գ. նիստին համար պատրաստուած էր խտացեալ ատենագրութիւն մը: Պ. Արշակ Չօպանեան փափաք յայտնեց որ կարելոր նիստերու եւ վիճաբանութեանց առթիւ ատենագրութիւն իրաքանչիւր ատենախօսի խօսքերը, այն կերպով ինչպէս որ եղած էր Ա. եւ Բ. նիստերուն համար:

Նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան յայտնեց թէ այդ էր նաեւ Դիւանին մտադրութիւնը:

2.- Դիւանի ընտրութեան մասին.

Նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան Դիւանի ընտրութեան անդրադառնալով, կրկնեց նախորդ նիստին ընթացքին իր կողմէ յայտնուած բաղձանքը թէ կը նախընտրէ ժողովին քան դիւանին մէջ մնալ, ազատօրէն կարենալ խօսելու համար յուզուած հարցերու մասին: Այս մտքով փափաք յայտնեց հրաժարելու ժողովին նախագահութենէն:

Համագումարը չընդունեց այս տեսակէտը, Նորատունկեան Էֆէնտին ազատ թողլով յարմար դատած ատենը միջամտելու եւ իր տեսակէտները պարզելու վիճաբանութեան ենթարկուած խնդիրներու մասին:

3.- Յունաստանի պատգամաւորին խնդիրը.

Պ. Արտաւազդ Հանըմեան անդրադարձաւ Համագումարի այն որոշման որով Հին եւ Նոր Յունաստանի հայ գաղութներուն պատգամաւոր նկատուած էր Հին Յունաստանի գաղութին կողմէ ընտրուած Պ. [Միքայէլ] Պապաջանեանը, մինչդեռ Նոր Յունաստանի գաղութը իր կողմէ ընտրած էր Բրօֆ. Թումայեանը: Համագումարը այս որոշման յանգած էր՝ նկատելով որ Բրօֆ. Թումայեան արդէն իսկ պատգամաւոր ընտրուած է բողոքականներու Ազգապետարանին կողմէ եւ թէ մէկ պատգամաւոր չի կրնար երկու ծայն միացնել իր վրայ: Պ. Հանըմեան, դիտել տալով թէ Համագումարը «քիչ մը ընտանեբար» վարուեցաւ այս որոշման մէջ, առաջարկեց որ դիւանին կողմէ գոնէ առ ի տեղեկութիւն այս որոշումը հաղորդուի Նոր Յունաստանի գաղութին:

³ Սեւագիր օրինակին մէջ, նաեւ՝ «2.- Տեղեկագիր եւ հաշուեցոյց գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան. 3.- Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին»:

Համագումարը ընդունեց այս առաջարկը եւ յանձնարարեց դիւանին որ նամակ մը գրելով պարզէ այն ստիպողութիւնը որով այդ որոշման յանգած էր:

4.- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնաժողովին.

Կարդացուեցաւ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշայի 17 Մայիս 1920 թուակիր նամակը, որուն յարակից՝ Համագումարին կը դրկէր Պատուիրակութեան կողմէ տնտեսուած Ազգային Հանգանակութեան, ինչպէս նաեւ բրօքականտի եւ դիւանագիտական ծախքերու հաշիւները:

Նախագահ Նորատունկեան էֆէնտի ժողովին յիշեցնելով թէ նախորդ տարի Համագումարը ընտրած էր Հաշուեքննիչ Յանձնաժողով մը որուն կ'անդամակցէին ՊՊ. Մարտիրոս Տէրպետէեան, Տիգրան խան Քէլէկեան եւ Գառնիկ Ֆնտգլեան, առաջարկեց վերակազմել այդ Յանձնաժողովը եւ անոր յանձնել Պատուիրակութեան նախագահին կողմէ դրկուած հաշիւները, որոնց քննութեան խնդիրը օրակարգին վրայ է արդէն:

Համագումարը Հաշուեքննիչ Յանձնաժողովը վերակազմեց, անդամ նըշանակելով՝

ՊՊ. ՊՕՂՈՍ ՊԷՅ ՄԸՍԸՐԸԸ
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐՊԷՏԵՐԵԱՆ
ԳԱՌՆԻԿ ՖՆՏԳԼԵԱՆ

5.- Պատգամաւորներու ճշդապահութեան եւ վիճաբանութեանց կանոնաւորութիւնը.

Համագումարը ծայնակցեցաւ Պ. Տիրան Տէօվլէթեանի, որ գանգատ յայտնեց թէ պատգամաւորներէ ոմանք պէտք եղածին չափ ճշդապահ չեն ըլլար, որով նիստերու բացումը ուշ տեղի կ'ունենայ եւ աշխատութիւնները կը յետաձգուին:

Համագումարը յոյս յայտնեց որ այս անպատեհութեան մասին գանգատելու առիթ չի տրուիր այլեւս, ու ծայնակցեցաւ Պ. Տէօվլէթեանի այն խօսքերուն որոնցմով բաղձանք կը յայտնէր որ աւելորդ վիճաբանութիւններ տեղի չունենան եւ իրաքանչիւր ատենախօս կարելի եղածին չափ հակիրճ կերպով մը պարզէ իր տեսութիւնները ներկայացուած խնդիրներու մասին, որպէս զի արագ լուծում մը գտնեն եւ օր առաջ լրանան Համագումարին աշխատութիւնները, նկատելով որ պատգամաւորներէն շատեր չեն կրնար երկար ժամանակ մնալ Փարիզ:

ՕՐԱԿԱՐԳ

1.- Համադատութիւն Ազգ. Պատուիրակութեան

Ազգային Պատուիրակութեան տեղեկաբեր Պ. Արշակ Զօպանեան կարդաց Պատուիրակութեան միամեայ գործունէութեան մասին հետեւեալ ամփոփ տեղեկագիրը.-

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ⁴

Հայ Ազգային Պատուիրակությունը որ անուանում էր Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսէն, 1918ի վերջերը հրաիրեց, ինչպէս գիտէք, ամբողջ աշխարհի Հայերը իրենց պատգամաւորները դրկել Փարիզի մէջ կազմուելիք Համագումարի մը որուն պաշտօնն էր գործունէութեան ծրագիր մը գծել եւ նոր Պատուիրակութիւն մը ընտրել: Թուրքիոյ եւ գաղութներու Հայերը ներկայացնող 38 պատգամաւորներ եկան մասնակցիլ այս Համագումարին որ տեղի ունեցաւ 24 Փետրուար 1919էն մինչեւ 22 Ապրիլ 1919⁵: Ռուսական Հայաստանը անկախ Հանրապետութիւն մը կազմած ըլլալով, պատգամաւորներ չէր դրկած. հետեւաբար Համագումարը Թրքական Հայաստանի ներկայացուցչութեան մը հանգամանքը ունեցաւ. բայց Խաղաղութեան Վեհաժողովին մօտ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան անդամները, որոնք նոյն միջոցին Փարիզ հասած էին, հրաիրուեցան ազատագրուած Ռուսական Հայաստանը ներկայացնել Համագումարին մէջ, որուն մասնակցեցան խորհրդակցական հանգամանքով եւ ուր ամէն որոշում տրուեցաւ անոնց հետ համաձայնութեամբ:

Համագումարը ընտրեց չազատագրուած Հայաստանը ներկայացնող նոր պատուիրակութիւն մը եւ անոր տուաւ իր գործունէութեան ծրագրին լայն գիծերը պարունակող հրահանգ մը:

Այդ Հրահանգին համաձայն, նոյն Համագումարէն ընտրուած Հայ Ազգային Պատուիրակութիւնը Հանրապետութեան Պատուիրակութեան հետ միասին պիտի կազմէր «Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւն»ը,- ինչպէս որոշուեցաւ անուանել: Երկու պատուիրակութիւնները, վերոյիշեալ Հրահանգին համաձայն, պարտաւոր էին գործել իբրեւ միակ մարմին մը եւ ամէն դիմում համախոհաբար կատարել:

Համագումարը որոշեց որ նոր պատուիրակութիւնը պէտք է զինքը վերստին նիստի հրաիրէ հետեւեալ երեք պարագաներուն մէջ.

1° Եթէ պատուիրակութիւնը ստոր պէտքը զգայ.

2° Եթէ պատուիրակութիւնը ստիպուած ըլլայ իրեն տրուած հրահանգներէն շեղելու.

3° Երբ Հայկական խնդիրը վերջնական լուծում մը ստանալու վրայ ըլլայ:

⁴ Ի տարբերութիւն Անտոնեանի ձեռագրով արձանագրուած եւ թերպահպանեալ վաւերագրին (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 56), այլ ձեռագրով գրուած ամբողջական տեղեկագիրը (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 54. այսուհետեւ՝ Ա. Տարբերակ), ինչպէս նախապէս նշուեցաւ, խորագրուած է՝ «Տեղեկագիր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Գործունէութեան (1919 Ապրիլ – 1920 Մայիս)»:

⁵ Անտոնեան ատենագրութեան մաքրագրման պահուն 1919ի փոխարէն սխալմամբ արձանագրած է 1909 երկու անգամ: Ա. տարբերակը գրառողը բաւականացած է միայն օրերու եւ ամիսներու նշումով, առանց տարբերիլի:

Այս վերջնական լուծման ժամը հասած ըլլալով, Ազգ. Պատուիրակութիւնը նիստի հրաւիրեց Համագումարը, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան գործունէութեան հաշիւը տալու եւ ստացուած արդիւնքները անոր ներկայացնելու համար:

Հայ Ազգ. Պատուիրակութիւնը որ բաղկացած էր վեց անդամէ, իր առաջին նիստին մէջ (6 Ապրիլ 1919) նախագահ ընտրեց Վսեմ. Պօղոս Նուպար փաշան, դեր-նախագահ ՊՊ. Բրօֆ. Ալբրահամ] Տէր-Յակոբեանը եւ Գ[արեգին] Փաստրմաճեանը, եւ ատենադպիր Պ. Արշակ Չօպանեանը: Հանրապետութեան Պատուիրակութիւնը կը բաղկանար ՊՊ. Ահարոնեանէ, Հ[ամազասպ] Օհանջանեանէ եւ Մ. Պապաջանեանէ. այս վերջինը Փարիզ հասաւ 1919 Յունիսի վերջը եւ քանի մը ամիս մասնակցեցաւ Հանրապետութեան Պատուիրակութեան, ինչպէս նաեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան գործունէութեան. այնուհետեւ հրաժարականը դրկեց իր կառավարութեան որ զայն ընդունեց՝ խնդրելով միայն իրմէ որ մինչեւ իր յաջորդին անուանումը շարունակէ աշխատակցիլ Պատուիրակութեան. Պ. Պապաջանեան մերժեց, բայց Ազգ. Պատուիրակութեան խնդրանքին վրայ հաւանեցաւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերուն մասնակցիլ իբրեւ խորհրդական:

Առաջին օրէն համաձայնութիւն գոյացաւ որ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերուն պիտի նախագահէ Վսեմ. Պօղոս Նուպար փաշա:

Պատուիրակութիւնը պահեց Հայկական Տեղեկատուութեան Պիւրօն, որ արդէն ստեղծուած էր նախկին Պատուիրակութեան կողմէ՝ Համագումարի կազմութենէն առաջ, եւ անոր տնօրէն նշանակեց Պ. Արտաւազդ Հանըմեանը եւ իբրեւ աշխատակից՝ Տիկին Զապէլ Եսայեանը: Նոյնպէս ստեղծեց Դիւանատուն մը (chancellerie) հայ ազգայնութեան վկայականներ յանձնելու, ֆրանսական յատուկ պաշտպանեալի անունով անցագիրներու ստացումը դիւրացնելու, եւ երկիր երթալ փափաքող բայց նիւթական միջոցներէ զուրկ Հայերու վերադարձին օգնելու համար: Պ. Մ. Կիւմշեան, որ Պատուիրակութեան Ընդհանուր Քարտուղար անուանուած էր, պաշտօն ստացաւ այս դիւանատունն ալ վարելու:

Ազգ. Պատուիրակութիւնը Պ. Ճէյմս Մալքումը իրեն ներկայացուցիչ կարգեց Անգլիոյ մէջ, Պ. Ն. Տէր-Ստեփանեանը՝ Իտալիոյ եւ Պ. Մ[իհրան] Սվազլըն՝ Միացեալ-Նահանգներուն մէջ: Պ. Միհրան Տամատեան Կիլիկիա ղըրկուեցաւ իբրեւ լիազօր ներկայացուցիչ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Դաշնակից իշխանութեան եւ Հայ հասարակութեան մօտ: 1920 Փետրուարին Տիկին Զապէլ Եսայեան Կիլիկիա ղըրկուեցաւ որպէս օժանդակ Պ. Տամատեանի՝ դպրոցական գործին եւ որբերու պաշտպանութեան համար: Վերջերս Պ. Ա. Սասունի ալ հոն ղըրկուեցաւ իբրեւ Պ. Տա-

մատենի օժանդակ՝ թուրքերու սպառնալիքին դէմ Հայ ժողովուրդին պաշտպանութեան գործին համար:

Պատուիրակութիւնը պաշտօն ունէր, Համագումարին իրեն տուած հրահանգներուն համաձայն,

1° Հետապնդել, յանուն Հայկական Համագումարի, Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագրին մէջ գտնուող հայկական պահանջներուն լիակատար իրականացումը:

2° Սատարել Միացեալ Հայաստանի միակ կառավարութեան կազմութիւնը իրականացման:

3° Աշխատիլ որ Հայ ազգը առաջին վայրկեանէն իսկ ընդունուի անդամ Ազգերու Ընկերութեան:

Երկար պիտի ըլլար թուել այն բոլոր դիմումները որ կատարուեցան, այն բոլոր յուշագիրներն ու Յիշատակագրերը որ ներկայացուեցան Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ՝ այս պաշտօնը գործադրելու համար: Պիտի տանք միայն մէկ ամփոփումը Պատուիրակութեան գործունէութեան լայն գիծերուն, պատրաստ ըլլալով լրացուցիչ տեղեկութիւններ հայթայթելու Համագումարի այն անդամներուն որոնք հարցումներ պիտի ուղղեն մեզ:

Համագումարը, գրեթէ միաձայնութեամբ, փափաք յայտնած էր որ Միացեալ-Նահանգները, Հայ ժողովուրդին ստուար մեծամասնութեան փափաքին համաձայն, Հայ պետութեան համար Ազգերու Ընկերութեան նշանակելիք հոգատարը դառնայ: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը, իր պաշտօնավարութեան սկզբնաւորութենէն իսկ, միեւնոյն ատեն բոլոր Դաշնակից Պետութեանց մօտ շարունակական դիմումներ ընելով հանդերձ, մասնաւորաբար աշխատեցաւ ստանալ ամերիկեան պատուիրակութեան եւ կառավարութեան աջակցութիւնը: Ամերիկեան պատուիրակութեան անդամներէն ոմանց խորհուրդով, 11 Ապրիլ 1919ին նամակ մը ուղղեց արտաքին գործոց նախարար Պ. Լանսինկի (Պ. Ուիլսոն այդ միջոցին Միացեալ-Նահանգներ կը գտնուէր), յանուն Հայ ազգին Ամերիկեան կառավարութենէն խնդրելով որ ընդունի Հայաստանի հոգատարութիւնը: Այս խնդրանքը համակիր ընդունելութիւն մը գտաւ: Որոշ եւ վճռական պատասխան մը չտրուեցաւ Ամերիկեան կառավարութեան կողմէ, որ չէր կրնար Հայաստանի հոգատարութեան ընդունուիլը որոշել՝ Ծերակոյտին կողմէ Ազգերու Ընկերութեան Դաշնաթուղթին վաւերացումէն առաջ: Բայց այն բերանացի յայտարարութիւնները զորս ըրած էր Նախագահ Ուիլսոն Ամենապատիւ Դուրեան Սրբազանի եւ Բրոֆ. Տէր-Յակոբեանի, երբ անոնք իրեն ներկայացան Ազգային Համագումարի նիստերու միջոցին, ու վերջէն Պօղոս Նուպար փաշայի եւ Պ. Ահարոնեանի, ինչպէս նաեւ Ազգ. Պատուիրակութեան եւ Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահներուն իր ուղղած նամակները, ցոյց կու տային Նախագահին յայտնի փափաքը,

որ ամբողջ Ամերիկեան պատուիրակութեան ալ փափաքն էր, Հայաստանի հոգատարութեան Ամերիկայի կողմէ ստանձնյման մասին:

Քիչ վերջը, Պ. Ուիլսոնի, Պ. Լոյտ Ճորճի, Պ. Քլէմանսոյի եւ Պ. Օրանտոյի միջեւ տեղի ունեցած խօսակցութեանց հետեւանքով, հասկացողութիւն գոյացաւ որ Հայաստանի հոգատարութիւնը պիտի տրուէր Ամերիկայի, ըստ որում Ամերիկեան կառավարութիւնը տրամադրութիւն կը յայտնէր զայն ընդունելու՝ եթէ Ծերակոյտը վաւերացնէր Ազգերու Ընկերութեան Դաշնաթուղթը:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը Խաղաղութեան Վեհաժողովին մօտ՝ յարատեւ յարաբերութեան մէջ մնաց Ամերիկեան պատուիրակութեան հետ, ունեցաւ բազմաթիւ տեսակցութիւններ հոգատարութեան վերաբերմամբ քննութիւն մը կատարելու համար Հայաստան գացող եւ Պ. Չարլզ Քրէյնի նախագահութեան տակ գտնուող ամերիկեան Յանձնախումբի անդամներուն, ինչպէս նաեւ Զօրավար Հարպորթի հետ՝ անոր Հայաստան մեկնելէն առաջ: Դարձեալ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցաւ Տօքթ. Պարթընի հետ՝ անոր Փարիզէն անցած ատենը. Տօքթ. Պարթըն վճռապէս խոստացաւ աշխատիլ ի նպաստ Հայաստանի անկախութեան իրականացման, եւ ո՛րեւէ ձեւի ներքեւ Ամերիկայի աջակցութեան ստացման: Նոյնպէս սերտ յարաբերութիւններ ունեցաւ Միացեալ-Նահանգներու Կ. Պոլսոյ նախկին դեսպան Պ. Մորկընթաուի հետ, որուն պատերազմի ընթացքին Թուրքիոյ մէջ Հայոց դէմ գործուած խժոժութեանց վերաբերմամբ ըրած հրատարակութիւնները եւ բանախօսութիւնները այնքան խոր տպաւորութիւն մը գործեցին Ամերիկայի մէջ: Ունեցաւ նաեւ մէկէ աւելի տեսակցութիւններ Գնդապետ Հասքէլի հետ, այս վերջնին իբր Բարձր-Քոմիսէր Հայաստան մեկնումէն առաջ:

Կովկասի մէջ սովի սպառնալիքին առջեւ, Պատուիրակութիւնը դիմումներ ըրաւ Ամերիկայի Պարենաւորման Նախարար Պ. Հուվըրի մօտ եւ ձեռք բերաւ ամսական 7000 թօնօ ալիւրի առաքումը Հայկական Հանրապետութեան. ստորագրուեցաւ պայմանագիր մը Ազգ. Պատուիրակութեան եւ Հայկական Հանրապետութեան Նախագահներուն կողմէ(*)⁶, պայմանագիր՝ որուն համաձայն Հայկական պետութիւնը յանձն կ'առնէ յառաջիկային վճարել փոխ տրուած այս ալիւրին փոխարժէքը: Երեւանի կառավարութիւնը

⁶ Անտոնեան անելցուցած է այս ծանօթագրութիւնը. (*) Թարգմանութեան այս մասը սխալ պէտք է ըլլայ: Ֆրանսերէն բնագրին մէջ Ազգ. Պատուիրակութեան խօսք չկայ եւ նախադասութիւնը ճիշտ ու ճիշտ հետեւեալն է. «Un contrat a été signé par le Président de la Délégation de la République arménienne». այսինքն՝ «Պայմանագիր մը ստորագրուեցաւ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահին կողմէ», եւն.: Արդէն քանի մը տող վարը պայմանագրին Երեւանի կառավարութեան կողմէ վաւերացման յիշատակութիւնը ցոյց կու տայ որ ճիշտը ֆրանսերէն բնագիրն է:

նը վերջէն վաւերացուց այս պայմանագիրը որ ներկայ տարուան սկիզբը վերանորոգուեցաւ բազմաթիւ ամիսներու համար:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը յատուկ դիմումներ ըրաւ Դաշնակից կառավարութեանց՝ թաթարներու եւ վրացաց կողմէ վեճի տակ դրուած հայ հողամասերուն, Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Լոռիի համար, ինչպէս նաեւ Կիլիկիոյ համար:

1919ի գարնան վերջերը եղաւ վայրկեան մը ուր Ամբողջական Հայաստանի մը ծրագիրը, այնպէ՛ս ինչպէս Հայկական Համագումարը սահմանած՝ էր զայն եւ որ առաջին օրէն իսկ Ամերիկեան պատուիրակութեան հաւանութիւնը գտած էր, սկզբունքով ընդունուեցաւ Դաշնակիցներէն. թերթերու մէջ երեւցող կէս-պաշտօնական նօթեր նախատեսել կու տային Թուրքիոյ բաժանումը, Կ. Պոլիս միջազգային քաղաքի մը վերածուած, բուն թըրքական շրջանները երկու գօտիի բաժնուած, որոնց մէկը՝ Սուրիոյ հետ՝ կը դրուէր Ֆրանսայի հակակշռին տակ եւ միւսը՝ Իտալիոյ. Միջագետքը եւ Պաղեստինը Անգլիոյ պահպանութեան յանձնուած, եւ Հայաստանը՝ բաղկացած մեր Յիշատակագրին մէջ յիշուած բոլոր հողամասերէն (մէջը ըլլալով նաեւ Ատանայի վիլայէթը)՝ անկախ պետութիւն մը եղած, իրեն իբրեւ հոգատար ունենալով Ամերիկան: Ֆրանսական կառավարութիւնը ինքզինքը պատրաստ ցոյց կու տար հրաժարիլ Կիլիկիոյ վրայ իր յաւակնութիւններէն, ի բաց առեալ Իսկէնտէրունը, եթէ Ամերիկա ստանձնէր հոգատարութիւնը:

Ատկից քիչ վերջը, անգլիական նախարար Պ. Մօնթէկիլի առաջնորդութեամբ, Փարիզ ժամանեց Հնդկաստանի իսլամներուն պատգամաւորութիւնը որ կու գար Խաղաղութեան Համաժողովին մօտ բողոքել Թուրքիոյ բաժանումին եւ Սուլթանին Կ. Պոլսէն վտարման դէմ. այդ րոպէէն յետոյ յեղաշրջուեցաւ մեր բաղձանքներուն այնքան նպաստաւոր թուող այս կացութիւնը. բաւական ընդարձակ եւ անկախ ու Կ. Պոլիսը իրեն մայրաքաղաք ունեցող Թուրքիոյ մը կողմնակիցները վերստին ուժեղացան: Միւս կողմէ, Ամերիկացաց մէջ գոյացաւ զօրաւոր հոսանք մը որ կը պահանջէր ո՛չ թէ Հայաստանի, այլ ամբողջ Թուրքիոյ եւ նոյն իսկ Կովկասի հոգատարութիւնը, մէջն ըլլալով Հայաստանը,՝ ինչ որ կնճռոտեց կացութիւնը: Պատուիրակութիւնը պայքարեցաւ այս հոսանքին դէմ, մղելու համար Ամերիկան որ ստանձնէ մի՛ միայն Թուրքիայէն անջատուած Հայկական պետութեան հոգատարութիւնը:

Յաւելով տեսանք որ Զօրավար Հարպորթի վերջերս հրատարակուած տեղեկագիրը կը պաշտպանէր ամբողջ Թուրքիոյ եւ Հայաստանի համար հոգատարութեան մը տեսակէտը զոր մէջտեղ դնողներէն մէկը Պ. Մորկընթաուն էր:

⁷ Ա. տարբերակին մէջ՝ սահմանագծած:

Թրքասերները մինչեւ անգամ գաղափարը ունեցան Տամատ Ֆերիտ փաշայի նախագահութեամբ Թրքական պատուիրակութիւն մը Փարիզ բերելու՝ Դաշնագրին խմբագրութենէն առաջ Թուրքիոյ ներկայացուցիչներուն կարծիքը առնել տալու նպատակով. այս Պատուիրակութեան ներկայացուցած Յիշատակագրին որ Թուրքիոյ ամբողջութեան պահպանումը կը պահանջէր, Խաղաղութեան Վեհաժողովը կորովի պատասխան մը տուաւ որ բոլորովին կը հակառակէր թրքասերներու ձգտումներուն եւ որուն յետագայ հատուածը Օսմանեան իշխանութենէն ազատագրուիլը ցանկացող ոչ-թուրք ժողովուրդներու յոյսերը զօրացնելու բնոյթը ունէր.

«Պատմութիւնը մեզի կը յիշէ թրքական բազմաթիւ յաջողութիւններ եւ նաեւ բազմաթիւ թրքական ձախողութիւններ. նուաճուած ազգեր եւ ազատագրուած ազգեր: Յիշատակագիրն ալ կ'ակնարկէ դեռ մօտ ատեններս թրքական գերիշխանութեան տակ գտնուող հողամասերու նուազման:

«Բայց եւ այնպէս, այդ բոլոր փոփոխութիւններուն մէջ չենք գտներ միակ պարագայ մը, ըլլայ Եւրոպայի, ըլլայ Ասիոյ եւ մինչեւ իսկ Ափրիկէի մէջ, ուր ոեւէ երկրի վրայ Թրքական տիրապետութեան հաստատման յաջորդած չըլլայ այդ երկրին նիւթական բարօրութեան նուազումը եւ մշակութային մակարդակին անկումը. եւ գոյութիւն չունի նոյնպէս պարագայ մը ուր թրքական տիրապետութեան բարձման հետեւած չըլլայ նիւթական բարօրութեան յաւելում մը եւ մշակութային մակարդակի բարձրացում մը: Եւրոպայի քրիստոնեաներուն մէջ ըլլայ՝ թէ Սուրիոյ, Արաբիոյ եւ Ափրիկէի Մահմէտականներուն մէջ, Թուրքը ուրիշ բան ըրած չէ բայց եթէ քանդել ամէն ուր որ յաղթած է. ան երբեք կարող երեւցած չէ խաղաղութեան մէջ զարգացնելու ինչ որ շահած էր պատերազմով: Այս ուղղութեամբ չէ որ իր ձիրքերը կը կիրարկուին:

«Այս իրողութեանց բացայայտ եզրակացութիւնը ըլլալ կը թուի հետեւեալը.- Թուրքիա, առանց ոեւէ չքմեղանքի եւ առանց իր դէմ ոեւէ գրգռիչ պատճառի, կանխամտածութեամբ յարձակում գործած ըլլալով Համաձայնական պետութեանց վրայ եւ յաղթուած ըլլալով, իր յաղթականներուն թողած է իր այլացեղ կայսրութիւնը կազմող զանազան ժողովուրդներուն ճակատագիրը տնօրինելու ծանր պարտականութիւնը: Դաշնակից գլխաւոր պետութեանց ժողովը կը փափաքի այս պարտականութիւնը կատարել գէթ այն չափով ո՛ր չափով որ համաձայն է այդ ժողովուրդներու բաղձանքներուն եւ տեական շահերուն հետ»:

Բայց այս կորովի եւ յստակ փաստաթուղթը երբեք չկասեցուց Թրքասիական շարժումը որ, ընդհակառակը, երթալով մեծցաւ: Ամերիկայի մէջ Պ. Ուիլսոնի հակառակորդները կրկնապատկեցին իրենց ջանքերը անոր ծրագիրներուն իրականացման դէմ, ընդդիմացան Ազգերու Ընկերութեան շատ մը կարեւոր յօդուածներուն Ամերիկայի կողմէ ընդունուելուն, եւ մաքառեցան յանուն Ազգերու Ընկերութեան Ամերիկայի ո՛րեւէ հոգատարութիւն ըստանձնելու գաղափարին դէմ: Հայկական անկախութեան դատը անտա-

րակոյս բարեկամներ միայն ունէր Ամերիկայի երկու ընդդիմադիր խումբերուն մէջ. Հանրապետականները, սկսեալ իրենց վարիչ Պ. Լոճէ, նոյնքան ջերմ կողմնակիցներ էին որքան Ռամկավարականները, անկախ ամբողջական Հայաստանի մը կազմութեան, բայց կը մտադրէին Ամերիկայի կողմէ այս Հայ պետութեան ուղղակի աջակցութիւն մը միայն ընծայել, առանց Ազգերու Ընկերութեան անունով ո՛րեւէ հոգատարութիւն առնելու: Եկաւ վայրկեան մը ուր Դաշնակիցներու մէջ ամէն մարդ համոզուեցաւ թէ Պ. Ուիլսոն Ծերակոյտին մէջ մեծամասնութիւնը չպիտի ունենայ, ինչ որ դէպքերը քիչ վերջ եկան հաստատել: Մեր Ամերիկացի բարեկամներէն շատեր գրեցին Պատուիրակութեան թէ այլեւս բնաւ յոյս չկար որ Ամերիկա ստանձնէր Հայաստանի հոգատարութիւնը: Հանրապետական Կուսակցութեան պատկանող յայտնի հայասէրներ, որոնք անդամ էին Հայաստանի անկախութեան Ամերիկեան Քօմիթէին, շարունակ խորհուրդ կու տային Հայկական պատուիրակութեան որպէս զի չպնդէ հոգատարութեան մասին եւ միայն խնդրէ ամերիկեան ազգին օժանդակութիւնը, այսպիսով անխտիր ամբողջ ամերիկեան ժողովուրդին միահամուռ աջակցութիւնը ունենալու համար: Հայաստանի անկախութեան Ամերիկեան Քօմիթէին նախագահը, Պ. Ճէրըրտ, որ բարեկամ մըն է Պ. Ուիլսոնի, 10 Հոկտեմբեր 1919ին ամերիկեան կառավարութեան կ'ուղղէր Յիշատակագիր մը որով կը խնդրէր, ո՛րեւէ հոգատարութենէ դուրս, Ամերիկայի ուղղակի եւ անմիջական օժանդակութիւնը Հայ պետութեան եւ բանակին, որպէս զի ի վիճակի ըլլան Թրքական Հայաստանը գրաւելու եւ Ամբողջական Հայաստանը կազմելու:

Ծերակուտական Պ. Ուիլսոն Ծերակոյտին ներկայացուց բանաձեւ մը որով կը խնդրուէր կառավարութենէն օգնել Հայ պետութեան, առանց ըսպասելու Ազգերու Ընկերութեան վերաբերեալ վէճին լուծման, 50 միլիոն տոլարի նուիրատուութիւն մը ընելով եւ 10.000 զինուոր զրկելով Հայաստան:

Հայկական պատուիրակութեան թելադրութեան վրայ, մեր գաղութներէն շատերը, Փարիզ, Լոնտոն, Պրիքսէլ, Իզմիր, Աթէնք, Եւայլն, հեռագիրներ ղրկեցին Ծերակոյտի նախագահին, խնդրելով որ Ծերակոյտը ընդունի այդ բանաձեւը:

Միացեալ-Նահանգներուն մէջ հայասիրական շարժումը զօրացնելու եւ Հայկական պետութեան անմիջական օգնութիւն մը ստանալու նպատակով եղած դիմումները լաւագոյն կերպով կատարելու համար, Հայկական Հանրապետութեան Պատուիրակութիւնը 1919 Յունիսին առաջարկեց Ամերիկա ղրկել Վսեմ. Յովհաննէս խան Մասէհեանը իբրեւ լիազօր ներկայացուցիչ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան: Մասէհեան խան յայտնեց թէ պատրաստ է այդ պաշտօնը ստանձնելու, եւ որոշեց իրեն հետ տանիլ իբրեւ քարտուղար Պ. Լէոն Շանթը: Ազգ. Պատուիրակութիւնը առանց վերապահութեան ընդունեցաւ այդ առաջարկը: Դժբախտաբար Մասէհեան խան արգելքներ ունեցաւ այս պաշտօնը կատարելու: Քիչ ժամանակ վերջը, Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեան Ամերիկա ղրկուեցաւ միեւնոյն պաշտօնով, իբրեւ

լիազոր ներկայացուցիչ Հայ Ազգ. Պատուիրակության, եւ Պ. Գ. Փաստրմաճեան այնտեղ գնաց Միացեալ-Նահանգներու մօտ [Հայաստանի] Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնով: Միեւնոյն ատեն, զինուորական պատուիրակութիւն մը, կազմուած Զօրավար Բագրատունիէ եւ Զօրավար Անդրանիկէ, առաջինն նախագահութեամբ, Ամերիկա կը մեկնէր յանուն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան, աշխատելու համար ձեռք բերել Ամերիկայի զինուորական օժանդակութիւնը Հայաստանի, այսինքն ամերիկեան զօրքերու առաքումը եւ Միացեալ-Նահանգներու կառավարութեան օգնութեամբ Հայ կամաւորական խումբերու կազմութիւնը: Հայկական Հանրապետութեան նախկին Վարչապետ Պ. Քաջազունի եւ նախկին Ելմտական Նախարար Պ. Էնֆիաճեան, իրենց օժանդակ ունենալով Պ. Փիրալեանը, նոյն պահուն կը մեկնէին Ամերիկա, Երեւանի կառավարութեան կողմէ Ամերիկեան կառավարութենէն փոխառութեալն մը համար դիմումներ ընելու պաշտօնով: Համաձայնուեցաւ որ այս բոլոր պատգամաւորութիւնները միաբան պիտի գործէին եւ միեւնոյն ծրագրին պիտի հետեւէին: Այդ ծրագիրն էր՝ աշխատիլ ստանալու Ամերիկայի դրամ[ակ]ան եւ զինուորական օժանդակութիւնը, ինչպէս նաեւ ճանչցնելու Հայաստանի Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը իր ներկայ սահմաններուն մէջ: Մինչեւ այդ վայրկեանը կար տեսակէտներու որոշ տարբերութիւն մը երկու պատուիրակութեանց միջեւ՝ այս ճանաչումը ստանալու մասին ըլլալիք դիմումներուն վերաբերմամբ: Հանրապետութեան Պատուիրակութիւնը կ'ուզէր Երեւանի կառավարութիւնը ճանչցնել իբրեւ Ամբողջական Հայաստանի կառավարութիւն. Ազգ. Պատուիրակութիւնը կը նկատէր որ աւելի տրամաբանական է եւ քաղաքական կացութեան աւելի համապատասխան՝ որ Երեւանի կառավարութիւնը ճանչցուի իբրեւ գոյապէս կառավարութիւն Հանրապետութեան ներկայ սահմաններուն մէջ, ըստպատելով որ Միացեալ Հայաստանը կատարուած իրողութիւն մը դառնայ եւ վերջնականապէս կազմուած այս Հայկական պետութիւնը Դաշնակիցներու կողմէն իրաւապէս ճանչցուի: Վերոյիշեալ զանազան պատգամաւորութեանց մեկնումէն քիչ առաջ, յանուն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացում Յիշատակագրի մը առիթով, երկու պատուիրակութիւնները համաձայնեցան այդ խնդրին վերաբերմամբ հետեւեալ բանաձեւին վրայ.- Պահանջել Հայկական Հանրապետութեան, ա՛յնպէս ինչպէս որ կայ, գոյապէս անկախութեան ճանաչումը:

Դժբախտաբար պատգամաւորութիւնները, հակառակ իրենց ըրած բոլոր ջանքերուն, երկար ատեն ապարդիւն մնացին. Ամերիկա, Ազգերու Ընկերութեան վերաբերեալ իր մեծ վէճին պատճառաւ ինքն իր մէջ բաժնուած, մինչեւ այս վերջին ժամանակներս չկրցաւ վճռական որոշում մը տալ խընդրուած զինուորական եւ դրամական օգնութիւնը Հայաստանի հայթայթելու մասին: Անոնք յաջողեցան միայն վերանորոգել տալու Հայաստանի փոխ

տրուած ալիւրին պայմանագիրը, ոյժ տալով ատոր համար պատուիրակութեան իսկ ըրած դիմումներուն:

1920 Յունուար 14ին Խաղաղութեան Վեհաժողովը ճանչցաւ գոյապէս անկախութիւնը Վրաստանի եւ Ատրպատականի⁸ Հանրապետութիւններուն: Ստոյգ աղբիւրէ տեղեկութիւն առինք թէ Վեհաժողովը յետաձգած էր Հայկական Հանրապետութեան ալ ճանաչումը, ո՛չ երբեք չարամիտ դիտումով մը, այլ Միացեալ Հայաստանի պետութեան կազմութենէն ետք այդ գործողութիւնը կատարելու մտադրութեամբ: Պատուիրակութիւնը խորհեցաւ թէ այդ յետաձգումը կրնար գէշ մեկնուիլ Հայ ժողովուրդին եւ իր դրացիներուն կողմէ, ու որոշեց նոր դիմում մը ընել Խաղաղութեան Վեհաժողովին որպէս զի մինչեւ Միացեալ Հայկական Պետութեան իրաւապէս ճանաչումը, գոյապէս ճանչցուի ներկայ Հանրապետութեան կառավարութիւնը⁹: Այս իմաստով Յիշատակագիր մը ներկայացուեցաւ Վեհաժողովին Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ, եւ Ապրիլ 19ին Վեհաժողովը ճանչցաւ Հայկական Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը, առանց սահմաններու հարցը կանխորոշելու. անգլիական արտաքին գործոց նախարարութիւնը, Ազգային Պատուիրակութեան Լոնտոնի ներկայացուցչին հաղորդելով այս որոշումը, կ'աւելցնէր թէ այս ճանաչումը չէր կապուեր Թրքական Հայաստանի եւ թէ կը վերաբերէր մի' միայն Երեւանի Հանրապետութեան: Այս ճանաչումը տեղի ունեցաւ նախ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ, յետոյ Ճաքոնի կողմէ. Ամերիկա վերապահեց իր որոշումը. միայն քանի մը շաբաթ առաջ է որ Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը, որ ճանչցած չէ Վրաստանի եւ Ատրպատականի Հանրապետութիւնները, ճանչցաւ Հայկական Հանրապետութեան գոյապէս անկախութիւնը, հետեւանք տալով մեր Ամերիկայի պատգամաւորութեանց, ինչպէս նաեւ նոյն ինքն Պատուիրակութեանս դիմումներուն:

Մինչ այդ, Հայաստանի հոգատարութեան Ամերիկայի կողմէ ստանձնումը Դաշնակիցներուն այնուհետեւ այլեւս անկարելի նկատուելով, Ֆրանսա վերադարձաւ իր 1916ի Համաձայնագրին վրայ հիմնուած նախկին ծրագրին, որով Կիլիկիա եւ Խարբերդի, Տիգրանակերտի ու Սեբաստիոյ վիլայեթները կը մտնէին ֆրանսական ազդեցութեան գօտիին մէջ. 1919 Նոյեմբեր ամսուն համաձայնութիւն մը կնքուեցաւ ընդմէջ Անգլիոյ եւ Ֆրանսայի, որուն հիման վրայ ֆրանսական զօրքերը Կիլիկիոյ մէջ բրիտանական զօրքերու տեղը պիտի բռնէին. այս համաձայնութիւնը, ինչպէս 1916ինը, կընքուեցաւ առանց Հայկական Պատուիրակութեան հետ խորհրդակցելու:

⁸ Թէքէեանի թարգմանութեան համաձայն, Ա. Տարբերակին մէջ՝ Ատրպէճանի:

⁹ Նախադասական կառոյցն այստեղ իր յստակութեամբ կու գայ հիմնաւորել Անտոնեանի բնագիրը հիմք ընդունելու մեր որոշումը: Ա. տարբերակին մէջ, որ բառացի արտագրումն է Թէքէեանի կատարած թարգմանութեան, կ'ըսուի. «... մինչեւ միացեալ հայկական պետութեան իրաւապէս ճանաչումը, ճանչցուի ներկայ Հանրապետութեան գոյապէս կառավարութիւնը»:

1919 Նոյեմբերին, վսեմ. Պօղոս Նուպար փաշայի հետ տեսակցութեան մը միջոցին, Լորտ Բըրզըն յայտարարեց թէ Ամբողջական Հայաստանի մը ծր-րագիրը չէր կրնար այլեւս իրականանալ, ըստ որում Նախագահ Ուիլսոն մեծամասնութիւն մը չունէր իրեն հետ եւ հետեաբար Ամերիկա պիտի չընդունէր Հայաստանի հոգատարութիւնը: Լորտ Բըրզըն ըսած էր միեւնոյն ատեն թէ Վեհաժողովը վճռած էր Միացեալ եւ անկախ Հայկական պետութիւն մը կազմել, բայց թէ այդ պետութիւնը շատ նուազ ընդարձակ պիտի ըլլար քան ինչ որ Հայերը կը պահանջէին իրենց Յիշատակագրով. թէ՛ այդ պետութիւնը իր մէջ պիտի պարունակէր ներկայ Հանրապետութեան հողամասերը եւ Թրքական Հայաստանի մէկ մասը՝ Սեւ ծովու վրայ ելքով մը: Անիկա աւելցուցած էր. «Գալով Կիլիկիոյ՝ պէտք է յարմարիք Ֆրանսայի հետ, որովհետեւ այդ երկիրը Ֆրանսական գօտիին մէջ կը գտնուի»: Լորտ Բըրզըն դիտել տուած էր նոյնպէս թէ այդ ապագայ Հայկական պետութեան եւ Կիլիկիոյ մէջտեղը ինկող հողամասերը մեծ մասամբ իսլամներէ բնակուած ըլլալով, դժուար էր զանոնք անջատել Թրքական պետութենէն: Ազգ. Պատուիրակութեան նախագահը յայտնած էր Լորտ Բըրզընի թէ այս յայտարարութիւնները խորին ցաւ պիտի պատճառեն հայ ժողովուրդին, եւ յիշեցնելով անոր թէ Դաշնակիցները խոստումներ տուած են բոլոր հայ հողամասերը թրքական տիրապետութենէ ազատագրելու՝ պնդած էր սա՛ իրողութեան վրայ թէ այդ բոլոր շրջաններուն մէջ հայ ազգաբնակչութիւնը պատերազմի նախօրեակին մեծամասնութիւն կը կազմէր: Բայց Լորտ Բըրզըն կրկնած էր որ բոլոր Հայ հողամասերու արմատապէս ազատագրումը անկարելի դարձած է Ամերիկայի կողմէ հոգատարութիւնը ստանձնելու մերժումին պատճառաւ: Արդէն Լորտ Բըրզըն հրապարակաւ ալ, նոյն ատենները, միեւնոյն յայտարարութիւնը ըրաւ [անգլիական] խորհրդարանին առջեւ արտասանուած ճառի մը մէջ:

Ատկէ քիչ վերջը, Պ. Պէրթթօ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան քաղաքական գործերու տնօրէնը, Պօղոս Նուպար փաշայի հետ տեսակցութեան մը միջոցին համանման յայտարարութիւն մը ըրաւ վերածեալ բայց բացարձակապէս անկախ հայկական պետութեան մը վերաբերմամբ եւ հաւաստեց թէ Կիլիկիոյ մէջ մասնաւոր ըէժիմ մը պիտի հաստատուի (*):¹⁰

Երկար խորհրդակցութիւններէ վերջ, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ինքզինքը ցաւագին հարկին մէջ գտաւ ազգային ծրագիրը պատշաճեցնելու այս նոր կացութեան. անտարակոյս ոչ մէկ իրաւաբլում ընդունուած էր. Պատուիրակութիւնը պիտի շարունակէր յայտարարել թէ

¹⁰ Անտոնեան ծանօթագրած է. «(*) Այս տեղեկագիրը հազիւ պատրաստուած ըլլալով նախորդ իրիկունը, ՊՊ. Վահան Թէքէեան, Արամ Անտոնեան, Արտաւազ Հանրմեան եւ Արշակ Չօպանեան իրենց մէջ բաժնեցին զայն, իսկոյն թարգմանելու համար: Սկիզբէն մինչեւ այստեղ թարգմանած է Պ. Վահան Թէքէեան»:

Հայ ազգին իրաւունքները՝ Խաղաղութեան Վեհաժողովին մատուցուած մեր Յիշատակագրին մէջ պահանջուած բոլոր հողամասերուն վրայ՝ կը մընան անեղծ. բայց որովհետեւ պարագաները անկարելի կը դարձնէին այս ամբողջական ծրագրին անմիջական իրականացումը, կը պահանջէր որ Հայկական պետութիւնը կազմուի Հայ Հանրապետութեան հողամասերէն, եւ Էրզրումի վիլայէթէն, Վանի վիլայէթէն (առանց Հէքքիարիի Սանճագին), Պիթլիսի վիլայէթէն (առանց Սղերդի Սանճագին) ու Խարբերդի Սանճագէն, ինչպէս նաեւ Սեւ ծովու եզերքի մէկ մասէն՝ ընդմէջ Տրապիզոնի եւ Պաթումի (մէջը ըլլալով նաեւ Տրապիզոնը, եթէ Դաշնակիցները մտադրութիւն չունենային Պոնտոսի Հանրապետութիւն մը ստեղծելու): Հայաստանի մընացեալ մասին համար, այսինքն Մալաթիոյ Սանճագին, Սվազի եւ Տիարպէքիի վիլայէթներու քանի մը շրջանակներուն եւ Կիլիկիոյ համար՝ կը պահանջէր որ ամբողջովին ազատուին թրքական տիրապետութենէն, Դաշնակիցներէն ճանչցուին իբր հայկական հողամասեր, օժտուին ինքնավար ռէժիմով մը եւ Ֆրանսա ստանձնէ անոնց պաշտպանութիւնը իբր հոգատար, Ազգերու Ընկերութեան անունով: Պարագաներուն յարմարցուած այս ծրագրին վերջնական խմբագրութեան մէջ՝ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ունեցաւ Ազգ. Համագումարի Նախագահ վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեանի աշխատակցութիւնը:

Լոնտոնի մէջ, այն դիմումներուն ընթացքին զորս կատարեց Վեհաժողովին մօտ որ մասնաւորաբար կը զբաղէր Թրքական հարցով, Պատուիրակութիւնը ունեցաւ աջակցութիւնը Ամենապատիւ Տ. Զաւէն պատրիարքի. քիչ ետքը ժամանեցին Հայ-Կաթոլիկ Պատրիարքարանի ներկայացուցիչ Նազլեան Գերապայծառ եւ Երեւանի Առաջնորդ Խորէն Եպիսկոպոս, որոնք թէ՛ Փարիզի եւ թէ՛ Լոնտոնի մէջ նոյնպէս օժանդակեցին Պատուիրակութեան:

Պօղոս Նուպար փաշա, Պ. Ահարոնեան եւ Զօրավար Կօրկանօֆ, ինչպէս նաեւ Ամեն. Զաւէն պատրիարք Լոնտոնի մէջ բազմաթիւ անգամներ ունկնդրութեան ընդունուեցան Սահմանագծման Յանձնաժողովին կողմէ եւ պարզեցին այն պատմական, ազգագրական ու ռազմագիտական պատճառները որոնց յենած էին Պատուիրակութեան հողային պահանջումները:

Սահմանազլուխը պիտի մեկնէր Տրապիզոնի արեւելեան կողմը գտնուող կէտէ մը, Սեւ ծովուն եզերքէն՝ ընդմէջ Տրապիզոնի եւ Սիւրմէնէի, եւ պիտի ուղղուէր դէպի հարաւ՝ դուրս ձգելով Երզնկան, բայց Հայաստանի պահելով Էրզրումը, Բաբերդը, Մամախաթունը. այս գիծը՝ Տարոսեան լեռնաշղթային հասնելուն՝ պէտք էր դառնար դէպի արեւելք եւ երկարէր մինչեւ Պարսկական սահմանազլուխը, դուրս ձգելով Հէքքիարին եւ Սղերդի Սանճագը եւ Հայաստանի պահելով Պիթլիսն ու Վանը. արեւելեան սահմանազլուխը հաստատուած էր թուրքեպարսիկ հին սահմանագծով՝ մինչեւ Հայկական Հանրապետութեան երկրամասը. իսկ Հանրապետութեան սահ-

մանները յետագային պիտի որոշուէին Հայոց, Վրացոց եւ Ատրպատականցոց միջեւ կայանալիք համաձայնութեամբ մը:

Խորհրդաժողովին Լոնտոն գումարուած միջոցին՝ Պատուիրակութեան կողմէ բազմաթիւ ծանուցագրեր ուղղուեցան Գերագոյն Խորհուրդին եւ Դաշնակից զանազան կառավարութեանց, բացատրելու համար այն կենսական կարեւորութիւնը զոր ունէր Էրզրումի վիլայէթին ամբողջութեան եւ Խարբերդի Սանճագին կցումը Հայկական պետութեան:

Միւս կողմէ՝ Անգլիական կառավարութիւնը՝ վերջապէս նպաստաւոր ընդունելութիւն մը ընելով Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ երկար ատենէ ի վեր եղած դիմումներուն, խոստացաւ հայթայթել հայկական բանակին անհրաժեշտ զէնքերը, ռազմամթերքն ու կազմաձնեւորը եւ բանակին թիւը բարձրացնել 40.000ի. խոստացաւ նաեւ բանակին տալ սպաներ: Հայկական պետութիւնը ապագային պիտի հատուցանէ Անգլիոյ կողմէ եղած այս ամբողջ օգնութեան ծախքերը: Բրիտանական կառավարութեան այս խոստումը արդէն իսկ գործադրուելու վրայ է: Ֆրանսական կառավարութիւնն ալ, իր կողմէ կը քննէ թէ ինչպէ՞ս պիտի կրնայ մասնակցիլ զէնքի եւ ռազմամթերքի այդ առաքման:

Լոնտոն մեկնելէն առաջ, Պօղոս Նուպար փաշա քանի մը տեսակցութիւններ ունեցած էր, որոնցմէ վերջինը Պ. Ահարոնեանի ընկերակցութեամբ, Պ. Պէրթլօի հետ՝ որուն պարզած էր Պատուիրակութեան կողմէ նոր կացութեան բերմունքով ընդունուած ծրագիրը. յիշեցնելով Կիլիկիոյ եւ սահմանակից երեք վիլայէթներու մասին այն յանձնառութիւնները զորս Ֆրանսա ստանձնած էր 1916ին, Ազգ. Պատուիրակութեան հետ կատարած իր բանակցութեանց ընթացքին՝ Հայկական Լեզէոնի կազմութեան առթիւ, Պօղոս Նուպար փաշա յոյս յայտնած էր թէ Ֆրանսա ոյժ պիտի տայ այսպէս նոր պարագաներուն յարմարցուած հայկական պահանջումներուն եւ պիտի գործադրէ իր խոստումները յիշեալ երեք նահանգներուն եւ Կիլիկիոյ մասին: Պ. Պէրթլօ վստահեցուցած էր զինքը թէ Ֆրանսա պիտի յարգէ իր յանձնառութիւնները եւ ոյժ պիտի տայ հայկական պահանջմանց:

Քիչ ետքը, Պ. Միլրան, երբ Լոնտոն կ'երթար Խորհրդաժողովին մասնակցելու, իրեն հետ կը տանէր ֆրանսական խորհրդարանի արտաքին գործոց Յանձնաժողովին կողմէ քուէարկուած որոշում մը, որով Յանձնաժողովը կը պահանջէր որ ամբողջովին Ֆրանսական ազդեցութեան ենթարկուելիք երեք նահանգներն ու Կիլիկիան սահմանակից ըլլան Հայկական պետութեան, այն տեսակ եղանակով մը որ Թուրքերու պատկանող ոչ մէկ հողամաս մնայ այդ ազդեցութեան շրջանակին եւ Հայկական Պետութեան միջեւ:

Անկլօ-Հայկական Քօմիթէն ալ 1920 Յունուար 1-ին բրիտանական կառավարութեան մատուցած Յիշատակագրին մէջ այդ ծրագիրը ջատագովեց: Ահաւասիկ այդ Յիշատակագրին էական մասերը.-

«... Հայաստանի եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ ամէն կապ պէտք է խզուի վերջնականապէս, եւ այս կերպով անջատուած երկիրը պէտք է պարունակէ Թրքական պետութեան արեւելեան սահմանէն սկսեալ մինչեւ արաբական պետութեան հիւսիսային սահմանին վերեւ գտնուող բոլոր նախկին Օսմանեան նահանգները, որոնց մէջ, 1914ին գոյութիւն ունէր Հայերէ, Քիւրտերէ, Յոյներէ, Գըզըլպաշներէ եւ Թուրքերէ բաղկացած խառն բնակչութիւն մը. այսինքն՝ Իսկէնտէրունի հիւսիսային կողմի, Տիարպէքիի, Հէքքիարիի, Միջերկրականի վրայ Սելեւքի արեւելեան կողմի, Գըզըլ Ըրմաքի վրայ Սվազի, եւ Սեւ ծովուն վրայ Եասուն հրուանդանին հողամասերով կազմուած երկիրը: Այս խոշոր գծերով սահմանուած երկրին մէջ՝ Կ. Պոլսոյ Օսմանեան կառավարութիւնը երկար տարիներու ընթացքին իրարու դէմ թշնամութեան եւ ներքին պատերազմի մղած է բնիկ զանազան ցեղերը. եւ շատ ապացոյցներ կան հաստատող թէ անգամ մը որ այս տարօրինակ եւ չարամիտ վեհապետութիւնը մեկուսացուի, այդ ցեղերը պիտի կրնան միասին ապրիլ բարեկամութեան եւ հաւասարութեան զգացումներով:

«Քօմիթէն կ'ընդունի որ երբ այդ երկիրը անջատուի Թուրքիայէն, կարելի չպիտի ըլլայ մօտաւոր ապագայի մը մէջ զայն կազմակերպել իբր միակ պետութիւն. միւս կողմէ՝ կ'ըմբռնէ որ եթէ Ամերիկա չընդունի ամբողջ երկրին վրայ հոգատարութիւնը, կարելի պիտի ըլլայ ուրիշ երկրի մը հոգատարութեան յանձնել այս երկրին հարաւ-արեւմտեան մասերը (Կիլիկիոյ ծովեզերքէն մինչեւ Տիարպէքիի եւ Խարբերդ): Այն պարագային երբ կարելի չըլլայ միակ հոգատարութիւն մը ապահովել Միացեալ-Հայաստանի համար, առարկութիւն չ'ըներ այդ կարգադրութեան դէմ, բայց կը թելադրէ որ այդ մասնակի հոգատարութիւնը նոյն երկիրներուն ապահովէ՝ ա.) կատարեալ անջատում մը Թուրքիայէն, բ.) կատարեալ անջատում մը Սուրիոյ ազգ. Արաբական պետութենէն, որուն համար ալ միեւնոյն պետութիւնը կրնայ առանձին հոգատարութիւն մը ստանձնել, գ.) ազատութիւն եւ հաւասարութիւն բոլոր ցեղերուն ու կրօնքներուն՝ հոգատարութեան ենթարկուած երկրին մէջ, դ.) պարտաւորութիւն մը հոգատար պետութեան կողմէ՝ ժողովուրդը մարզելու որպէս զի ինքզինքը կառավարէ եւ օր մը կարենայ ինք իր ձեռքով վարել իր ճակատագիրը, ու վերջապէս ե.) ներկայիս ըլլալիք այս առժամանակեայ կարգադրութիւնը պէտք չէ պարունակէ այն տեսակ բան մը որ օր մը արգելք դառնայ այդ նահանգներուն վերջնականապէս Հայաստանի միւս մասին միանալուն:

«Քօմիթէն կը պահանջէ որ Թուրքիայէն անջատուելիք հայկական երկիրներու մնացած մասը անմիջապէս մտնէ հայկական անկախ պետութեան մը կորիզին մէջ, որուն հաստատութեան ուլ անմիջական ճանաչման համար կը բաժնէ Լորտ Քըրզընի յայտնած յոյսը: Քօմիթէն գոհունակութեամբ տեղեկացաւ որ լորտը չէ առաջարկած, ինչպէս կարգ մը ոչ-պաշտօնական շրջանակներու մէջ յայտարարուեցաւ, սահմանափակել այդ պետութիւնը արդի Երեւանեան Հանրապետութեան կատարելապէս անբաւական հողե-

րուն մէջ, բայց միւս կողմէ կը փափաքի որ լորտը աւելի յստակ յայտարարութիւն մը ընէ այս մասին: Քօմիթէին կարծիքով՝ անկախ Հայաստանը պէտք է պարունակէ ո՛չ միայն երեւանի եւ Կարսի նախապէս Ռուսիոյ սեփականութիւն եղող շրջանակները, այլ նաեւ նախապէս Օսմանեան Կայսրութեան պատկանող հողամասերու շրջանակ մը որ առ նուազն իր մէջ պարունակէ Վան, Մուշ, Էրզրում եւ Երզնկա քաղաքները ու Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ մը»:

Լորտ Պրայս, 1920 փետրուար 16 թուականով Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Դաշնակցութեան կողմէ կազմակերպուած միթինկին առթիւ՝ նոյն Դաշնակցութեան նախագահին ուղղած նամակի մը մէջ կը գրէր.

«Իբր հետեւանք այն արիութեան որով Հայերը կոռուցան Դաշնակից բանակներու մէջ եւ որոնց փոխարէն խոստացուած էր հայկական ազատութիւնը, պարտականութիւն մը կը ծանրանայ Ֆրանսայի վրայ: Ուրախութեամբ կը ծայնակցինք ձեզի, պահանջելով որ ամբողջ Հայաստան միանգամ ընդմիշտ ազատի Թուրք տիրապետութեան ամէն մնացորդէ: Հաստատապէս կը հաւատանք թէ Ֆրանսական ժողովուրդին համակրութիւնը զօրավիգ պիտի դառնայ Հայաստանի այն մասին եւ Կիլիկիոյ, որոնք (ինչ որ ալ ըլլայ) Ազգերու Ընկերութեան «մանտա»յով մը պիտի պաշտպանուին ու կառավարուին Ֆրանսայի կարեկից ձեռքով. մինչդեռ այն մասը որ իր քաղաքական կատարեալ անկախութեան պիտի տիրանայ իբր Հայկական Հանրապետութիւն, պիտի մտնէ մշտակայ յառաջդիմութեան ճամբուն մէջ»:

Պարագաներուն յարմարցուած այս ծրագրին վերաբերող բոլոր դիմումները Դաշնակից կառավարութեանց մօտ՝ տեղի ունեցան Լոնտոնի եւ Փարիզի ամերիկեան դեսպաններու խորհուրդը հարցնելէ վերջ. երկուքն ալ յայտարարեցին թէ յոյս չունին որ Ամերիկա ստանձնէ հոգատարութիւնը: Միւս կողմէ, պարագաներուն պարտադրած այս նուազագոյն ծրագիրը կազմելէ առաջ, Պատուիրակութիւնը, Ամբողջական Հայաստանի միութիւնը պահպանելու համար, փորձ մը ըրաւ, հարցնելով նախ Անգլիոյ, յետոյ Ֆրանսայի, թէ կ'ուզեն ընդունիլ Ամբողջական Հայաստանի պետութեան հոգատարութիւնը. թէ՛ Լորտ Բըրզըն եւ թէ Պ. Պէրթօ, որոնց այս հարցումը եղած էր Պօղոս Նուպար փաշայի կողմէ, մերժողական պատասխան տրին:

Գերագոյն Խորհուրդը, Լոնտոնի մէջ, Հայաստանի սահմանները գծելէ վերջ, Ազգերու Ընկերութեան Գործադիր Խորհուրդին դիմեց, անոր առաջարկելով ընդունիլ Հայաստանի հոգատարութիւնը: Գերագոյն Խորհուրդը խնդրեց այդ առթիւ Հայկական Պատուիրակութենէն այն անհրաժեշտ ծանօթութիւնները որոնք պէտք պիտի ըլլային այս հոգատարութեան նկատմամբ Ազգերու Ընկերութեան Խորհուրդը լուսաբանելու համար: Այդ ծանօթութիւնները տրուեցան Գերագոյն Խորհուրդին որ զանոնք հաղորդեց Ընկերութեան Խորհուրդին: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան

կողմէ դիմումներ եղան թէ՛ Լոնտոնի եւ թէ՛ Փարիզի մէջ, Ընկերութեան վարիչներուն մօտ, որպէս զի ընդունին Գերագոյն Խորհուրդին առաջարկը: Ընկերութեան Խորհուրդը, Փարիզի մէջ եւ մասնաւորաբար հայկական խնդրին համար ունեցած գումարման ընթացքին, որոշեց ստանձնել Հայկական պետութեան պաշտպանութիւնը. իր որոշումը որ տրուած էր բոլոր անդամներուն միաձայնութեամբ, ձեւաբանուեցաւ Անգլիոյ Հանրային Կրթութեան նախարար Պ. Ֆիշերի ճառով, որուն գլխաւոր հատուածները հետեւեալներն են.-

«... Ազգերու Ընկերութեան Խորհուրդը այնպէս կը նկատէ որ ազատութեան, ապահովութեան եւ անկախութեան հիման վրայ Հայկական պետութեան մը կազմութիւնը նպատակ մըն է որ իր մէջ կը միացնէ եւ արժանի է միացնելու բովանդակ քաղաքակիրթ աշխարհին լուսամիտ հանրային կարծիքին գործօն համակրութիւնը: Բաւականաչափ յայտնի է արդէն թէ հայկական հինաւորց ազգը դժբախտութեանց զոհ դարձաւ այս վերջերս. եւ իր դժբախտութիւնները՝ իրենց ընդարձակութեամբ ու սոսկումով կը գերազանցեն համանման ինչ որ կրցած են արձանագրել մարդկութեան տարեգրութիւնները այս մոլորակին վրայ: Եթէ կարելի չըլլար հնար մը գտնել այս դժբախտ ժողովուրդը ապահովելու համար այն աղէտներուն դէմ զորս կրեց վերջերս, ատիկա պիտի նշանակէր իրապէս թէ քաղաքակրթութեան միջոցները շատ աննշան բաներ են:

«Ազգերու Ընկերութեան Խորհուրդը այնպէս կը նկատէ թէ հասնելու համար այդ նպատակին որ տիեզերապէս բաղձալի հոչակուած է, պէտք է որ քաղաքակիրթ պետութիւն մը, Ազգերու Ընկերութեան հովանաւորութեան տակ, ընդունի Հայաստանի հոգատարութիւնը: Այնպէս կը հաւատանք թէ այս տեսակ լուծում մը սիրով պիտի ողջունուի Հայոց կողմէ. այդ լուծումը ամէնէն լուրջ յոյսերը կը ներշնչէ դրական ու բարգաւաճ վարչութեան մը հաստատութեան մասին, եւ կը համաձայնի այն կարգադրութեանց որոնք վերջերս ծրագրուեցան՝ Ազգերու Ընկերութեան պաշտպանութեան ենթարկելու համար Ասիոյ ուրիշ մասերը, որոնց մէջ, քաղաքական տեսակէտով, իրերու դրութիւնը բոլորովին տարբեր բան մը չէ(«):¹¹

«Կարելի է հարց տալ սակայն թէ արդեօք հաւանակա՞ն է որ պետութիւն մը տրամադիր ըլլայ ընդունելու այդպիսի պատասխանատուութիւն մը: Ազգերու Ընկերութեան Խորհուրդը կը խորհի որ այդ հարցին պատասխանը մասամբ կախում ունի զինուորական միջոցներէն որոնք կարող են ձեռք առնուիլ խնդրոյ առարկայ եղող հողամասերը ազատագրելու եւ նոր պետութեան սահմանները պաշտպանելու համար, ու մասամբ ալ կախում ունի ելմտական նկատումներէ:

¹¹ Անտոնեան ծանօթագրած է. «(*) Պ. Թէքէեանի ընդհատած տեղէն մինչեւ այստեղ թարգմանեց Պ. Արամ Անտոնեան»:

«Խորհուրդը իր իրաաստիքանց սահմանէն դուրս նկատեց քննութիւնը Հայաստանի զինուորական կացութեան կամ այն անհրաժեշտ միջոցներուն որոնք պէտք են ձեռք առնուիլ ապահովելու համար խաղաղութիւնը այդ երկրին մէջ: Ինչ կը վերաբերի ֆինանսներուն, եթէ կարելի ըլլայ այնպիսի կարգադրութիւններու յանգիլ որ հոգատար պետութիւնը զերծ կացուցանէին այն ֆինանսական պատասխանատուութիւններէն որոնք կրնան իր վրայ պարտադրուիլ այդպիսի խնամատարութիւն մը ընդունելու պարագային, այդ պայմաններուն տակ կարելի է առաջուց ըսել որ անկարելի դժուարութիւններու կարող է չբաղխիլ Հայաստանի հոգատար մը գտնելու հարցը: Նոր պետութիւնը վարկի պէտք պիտի ունենայ որպէս զի կարելիութիւն ունենայ անցընելու իր գոյութեան առաջին ու դժուարին տարիները, ու այդ վարկը կ'ենթադրէ ֆինանսական երաշխատրութիւն: Ընկերութեան Խորհուրդը տրամադիր է Ընդհանուր Ժողովէն խնդրելու որ իր անդամները խորհին այն միջոցներուն վրայ որոնք կարող են ապահովել Հայաստանի համար հաւաքական երաշխատրութիւն մը: Սակայն մինչեւ այդ, եւ նկատի ունենալով այն պարագան որ Ընդհանուր Ժողովը աշունէն առաջ չպիտի գումարուի, Ընկերութեան Խորհուրդը Գերագոյն Խորհուրդին հետ յարաբերութեան պիտի մտնէ, գտնելու համար ֆինանսական առժամեայ կարգադրութեան այնպիսի եղանակ մը զոր կարելի ըլլայ գլուխ հանել դիւրացնելու համար հարցին այս ձեւով լուծումը, լուծում որ իբրեւ ամէնէն գոհացուցիչ արդիւնքները տալու ամէնէն աւելի հաւանականութիւն ունեցողը՝ ստացած է ընդհանուր հաւանութիւնը Ընկերութեանս Խորհուրդին»:

Լոնտոնի Խորհրդածողովին գումարման պահուն, ֆրանսական զինուորներու Մարաշէն ետ քաշուելուն եւ անոր յաջորդող կոտորածներուն լուրերը հասան: Ազգային Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահները, ինչպէս նաեւ Զաւէն Սրբազան Պատրիարքը, անմիջապէս բազմաթիւ դիմումներ կատարեցին ֆրանսական, անգլիական, ամերիկեան կառավարութեանց եւ Գերագոյն Խորհուրդին մօտ, խնդրելով որ ամենավճռական միջոցներ ձեռք առնուին Կիլիկիոյ Հայոց ապահովութեան համար: Նոյնօրինակ դիմումներ կատարուեցան Փարիզի մէջ, Ազգային Պատուիրակութեան անդամներուն, ինչպէս նաեւ Նազլեան Գերապայծառին կողմէ՝ ֆրանսական կառավարութեան մօտ: Լոնտոնի մէջ կատարուած այդ դիմումներուն վրայ Գերագոյն Խորհուրդը իր նիստերէն երկուքը յատկացուց Կիլիկիոյ հարցին: Բրիտանական կառավարութիւնը, համախորհուրդ իր Դաշնակիցներուն հետ, որոշեց Կ. Պոլիսը գրաման ենթարկել՝ այդ կերպով մէկ կողմէն դադրեցնել տալու համար թուրք ազգայնականներու յարձակումները Կիլիկիոյ քրիստոնէից դէմ, եւ միւս կողմէ իբր միջոց թուրքերը ստիպելու որ ընդունին Խաղաղութեան Դաշնագրին պայմանները: Ֆրանսական կառավարութիւնն ալ որոշ թուով օգնական զօրք ղրկեց Կիլիկիա եւ արտօնեց հայկական քանի մը կամաւորական խումբերու կազմութիւնը, անոնց տրամադրելով զէնք եւ ռազ-

մանիւթ: Կիլիկիոյ Հայոց Վեհափառ Կաթողիկոսը այդ օրերուն Ֆրանսա հասնելով, յանուն իր հօտին դիմումներ կատարեց Հանրապետութեան Նախագահին, Նախարարապետին եւ Պատերազմական Նախարարին մօտ եւ ստացաւ անոնցմէ երաշխիքներ թէ ֆրանսական կառավարութիւնը իր կարելին պիտի ընէ պաշտպանելու համար Կիլիկիոյ Հայերը: Քիչ ժամանակ վերջ Հայ-Կաթողիկ հասարակութեան Պատրիարքն ալ, Գերերջանիկ Թէրզեան Սրբազան, եկաւ իր ջանքերը միացնել Պատուիրակութեան այդ ուղղութեամբ թափած ջանքերուն: Բայց թուրք ազգայնականներու ուժերը, օր ըստ օրէ աճելով, շարունակեցին իրենց յառաջխաղացումը, եւ ֆրանսական զինուորները, որոնք թշնամիին թիւին համեմատ քիչօր էին եւ հաւանօրէն Մարաշը պարպելէ յետոյ հրաման ստացած էին միայն երկաթուղիի գիծը եւ Ատանայի շրջանը պահպանել, չկրցան հարկ եղած ամբողջ պաշտպանութիւնը ընձեռել Հայ ազգաբնակչութեան: Այսպէսով է որ Հաճընի, Զեյթունի եւ ուրիշ վայրերու մէջ Հայերը կը կռուին ու կը դիմադրեն հերոսաբար, կղզիացած ու թուրքերէ պաշարուած ամէն կողմէ: Քանի մը ամիսներէ ի վեր Պատուիրակութիւնը շարունակած է եւ կը շարունակէ իր դիմումները ֆրանսական ու Դաշնակից պետութեանց մօտ, որպէս զի արմատական միջոցներ ձեռք առնուին վանելու համար այն վտանգը որ կը սպառնայ Կիլիկիոյ մեր հայրենակիցներուն:

Սան-Բէմօի մէջ Գերագոյն Խորհուրդը կրկին խնդրոյ նիւթ դարձուց Էրզրումի կցումը Հայկական պետութեան, բան մը որ որոշուած էր Լոնտոնի մէջ: Պօղոս Նուպար փաշա եւ Պ. Ահարոնեան երկուքն ալ լսուեցան Գերագոյն Խորհուրդին կողմէ եւ երկուքն ալ հաստատեցին որ եթէ Դաշնակիցները – ինչպէս Գերագոյն Խորհուրդին նախագահը ընդնշմարել տուած էր այդ նիստերու ընթացքին – չէին կրնար զօրք դրկել Հայաստան, այդ պարագային Հայկական բանակին թիւը կարելի էր բարձրացնել 40.000ի, եւ եթէ Դաշնակիցները անոր տրամադրէին զէնք ու ռազմամթերք, այդ բանակը, Դաշնակից սպաներու հրամանատարութեան տակ եւ Դաշնակից դրօշակի տակ գործելով, կրնար Էրզրումը գրաւել ու պաշտպանել:

Այդ վկայութիւնները լսելէ ետք, Գերագոյն Խորհուրդը Էրզրումը Հայաստանի տրուելու մասին նպաստաւոր որոշումի մը յանգեցաւ. բայց յետոյ, իր կարգին խորհուրդ[ը] հարցնելով զինուորական Յանձնախումբին որ այն կարծիքը յայտնած էր թէ Էրզրումը գրաւելու համար շատ մեծ զինուորական ոյժի պէտք կար, Գերագոյն Խորհուրդը, բաժնուած կարծիքներով ու նեղուած դրութեան մէջ, որոշեց, վերջնական որոշում մը տալէ առաջ, վերջին անգամ մըն ալ դիմել Նախագահ Ուիլսոնի՝ հարցնելու համար թէ Ամերիկա կ'ընդունի՞ Հայաստանի հոգատարութիւնը. իսկ հակառակ պարագային խնդրելու համար իրմէ որպէս զի ինքը գծէ Հայաստանի եւ Թուրքիոյ բաժանման սահմանները: Միացեալ-Նահանգներու Հոռմի դեսպանը, Պ. Ճօնսըն, ներկայ գտնուեցաւ այն նիստին ուր Գերագոյն Խորհուրդը տուաւ այս որոշումը: Ազգային Պատուիրակութեան նախագահը Սան-Բէմօի մէջ

երկու անգամ տեսակցեցաւ Պ. Ճօնսընի հետ, որ վստահացուց զայն թէ «Հայկական դատը բարեկամ ձեռքերու մէջ կը գտնուի»: Ազգային Պատուիրակութիւնը նոյն առիթով հեռագիր մը ուղղեց նախագահ Ուիլսոնի, ըսելով անոր թէ Հայաստան ի՞նչ կը սպասէր իրմէն եւ Ամերիկայէն՝ բոլոր Հայկական հողամասերու ազատութեան համար:

Հայկական Պատուիրակութիւնը, Սան-Րէմօի Խորհրդաժողովին աշխատութեանց փակումէն առաջ նոր Յիշատակագիր մը ներկայացուց Գերագոյն Խորհուրդին, պահանջելով որ Հայկական պետութեան կցուին ո՛չ միայն Էրզրում քաղաքը, այլ [նաեւ] ամբողջ Էրզրումի վիլայէթն ու Խարբերդի Սանճազը, եւ որպէս զի մասնաւոր ըէժիմ մը հաստատուի Դաշնակից քօնթրօլի տակ՝ այս հայկական երկրամասերուն մէջ որոնք Հայկական պետութենէն դուրս պիտի մնային:

Այն խորհրդակցութիւնները որոնք Անգլիացիներու առաջարկով Լոնտոնի մէջ սկսուած էին Վրաստանի եւ Ատրպէճանի Պատուիրակութեանց եւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան միջեւ, եւ որոնք շարունակուած էին յետոյ Փարիզի մէջ, դարձեալ շարունակուեցան Սան-Րէմօի մէջ: Այդ բանակցութիւններու ընթացքին կարելի եղաւ համաձայնութիւն գոյացնել վէճի առարկայ եղող հողամասերը Իրաւախոհ Մարմնի մը որոշման յանձնելու մասին, բայց Վրացիներն ու Թաթարները չուզեցին ստորագրել այդ համաձայնութիւնը՝ նախապէս Պաթումի հարցին նկատմամբ համաձայնութիւն չգոյացուցած: Այդ համաձայնութիւնն ալ սակայն անկարելի եղաւ գոյացնել Վրացիներու անգիջողութեան հետեւանքով: Մեր Պատուիրակութիւնը ըրաւ կարգ մը զիջումներ, գլխաւորաբար հրաժարելով Ճորոխի ծախ ափը իբր Հայաստանի սահման ունենալու իր առաջարկէն եւ բաւականանալով միայն որ Հայերը իրաւունք ունենան իրենց ծախքովը շինելու երկաթուղիի գիծ մը որ Հայ Պետութեան սեփականութիւնը ըլլայ՝ կապելու համար Պաթումը Հայկական ներքնամասին, ինչպէս նաեւ այդ գիծէն մեկնող երկաթուղիի ուրիշ ճիւղ մը դէպի Լազիսթանի եզերքները որոնք Հայաստանի մաս պիտի կազմէին: Մեր Պատուիրակութիւնը կ'ընդունէր որ Պաթում քաղաքն ու Պաթումի նաւահանգիստը Վրաստանի տրուէին՝ Հայոց համար Պաթումի նաւահանգիստէն թրանզիթի համար ազատ անցքի իրաւունք միայն խնդրելով: Բայց Վրաստանի պատուիրակները մերժեցին Հայերուն այդ երկաթուղիի ճիւղը շինելու իրաւունքը եւ պահանջեցին որ Հայերը երկաթուղիի գիծին վրայ եւս Վրաստանի վեհապետական իրաւունքը ճանչնան: Բանակցութիւնները տակաւին չվերջացած՝ Վրացիները ծանուցագիր մը ներկայացուցին Գերագոյն Խորհուրդին՝ ամբաստանելով Հայերը իբրեւ բանակցութեանց ծախողման պատասխանատու:

Անգլիական Պատուիրակութեան անդամներէն Պ. Վանգիթարդ որ այս բանակցութեանց մեծագոյն մասին ներկայ գտնուած էր, եկաւ այն ատեն յայտարարել որ Լորտ Քըրզըն չպիտի հետաքրքրուէր այլեւս Անդրկովկաս-

եան երեք Հանրապետութիւններով, եթէ անոնք չհամաձայնէին իրենց մէջ, եւ թէ ինք կը խորհէր որ Հայոց առաջարկները՝ երկաթուղիի գիծը հայկական սեփականութիւն դարձնելու եւ դէպի Լազիսթանի եզերքները երկաթուղիի ճիւղ մը շինելու նկատմամբ, արդարացի եւ հիմնաւոր են: Պ. Վանգիթարդի ըրած այս յայտարարութեան վրայ նոր հաւաքում մը տեղի ունեցաւ համաձայնութեան եզր մը գտնելու համար, բայց Վրացիք, մեր Պատուիրակութեան առաջարկները միշտ անընդունելի նկատելով, յայտարարեցին որ իրենք իրաւասութիւն չունէին այդ հարցի մասին համաձայնութիւն կնքելու, եւ առաջարկեցին որ պատուիրակներ նշանակուին, որպէս զի երթան Կովկաս, երկու թէզերը ներկայացնեն իրենց Հանրապետութեանց կառավարութիւններուն, որպէս զի անոնք կայացնեն որոշում մը: Այս պայմաններուն մէջ, Հայկական Պատուիրակութիւնը ստիպուեցաւ, ինքն ալ իր կարգին, նամակով մը դիմել Գերագոյն Ժողովին՝ ճշդելով Վրացիներու ներկայացուցած Յիշատակագրին սխալ կէտերը եւ խնդրելով որ Գերագոյն Խորհուրդը, իբրեւ լաւագոյն լուծում, Հայկական Պետութեան կցէ Ճորոխի հովիտը, որպէս զի Հայաստանի երկաթուղին, իր ճիւղովը միասին, իր ամբողջ ընթացքը կատարէ հայկական հողամասի վրայէն՝ բացի Պաթում հասնելու համար եօթ քիլոմէթր երկայնութեամբ հատուածէ մը:

Պ. Վանգիթարդ յայտարարեց Հայկական Պատուիրակութեան որ Վրացիներու մերժումին հետեւանքով, առաջարկ պիտի բերուէր Գերագոյն Խորհուրդին որպէս զի Ճորոխի ձախ ափը Հայաստանի յատկացուի, անոր ապահովելու համար թրաֆիքի համար պէտք եղած ազատ անցքը:

Սան Րէմօի մէջ մեր Պատուիրակութեան աշխատութեանց իր աջակցութեան բաժինը բերաւ Տիար Գաբրիէլ Նորատունկեան:

*

Ազգ. Համագումարը յանձնարարած էր իր ընտրած Պատուիրակութեան որպէս զի միջոցներ ձեռք առնէ նպաստելու համար Միացեալ Հայաստանի կառավարութեան կազմութեանը:

Ազգ. Պատուիրակութիւնը մշակեց ծրագիր մը՝ կազմելու համար միացեալ կառավարութիւն, խորհրդարան եւ Պատուիրակութիւն: Հայկական Հանրապետութեան կառավարութեան հետ բանակցելու նպատակով Երեւան Առաքելութիւն մը ղրկելէ առաջ, Ազգ. Պատուիրակութիւնը կարծիքներու երկար փոխանակութիւն մը կատարեց Հանրապետութեան Պատուիրակութեան հետ որ, ինքն ալ իր կողմէ հակառաջարկներ բերած էր: Այդ օրերուն էր որ կատարուեցաւ Մայիս 28-ի *ակտին* հրապարակումը, որով Երեւանի կառավարութիւնը ինքզինքը հռչակեց Ամբողջական Հայաստանի կառավարութիւն: Երեւանի կառավարութեան այդ նախաձեռնութիւնը տեղի տուաւ, ինչպէս կը յիշուի, ամբողջ ազգին մէջ երկար բանավէճերու: Երեւանի կառավարութեան Ժողովրդական Կուսակցութեան պատկանող անդամները, Մայիս 28ի *ակտին* հետեւանքով, զոր չէին ընդուներ, իրենց հրաժարականը տուին եւ քաշուեցան: Այդ եղաւ նաեւ պատճառներէն մէկը, ո-

րոնց համար Պ. Պապաջանեան հրաժարեցաւ Հանրապետութեան Պատուիրակութեան անդամակցութենէն: Այս պայմաններուն մէջ Ազգ. Պատուիրակութեան համար պարտականութիւն մը կը դառնար՝ ո՛չ միայն Ազգ. Համագումարի ցուցմունքներուն համաձայն՝ Միացեալ կառավարութեան մը կազմութեան աշխատիլը, այլ նաեւ այդ արդիւնքը ձեռք բերելով վերջ դնել այն բոլոր վէճերուն որոնք առաջ եկած էին Մայիս 28ի *ակտին* հետեւանքով: Ազգ. Պատուիրակութիւնը դիւրացնելու համար միացման այդ գործը, հաւանեցաւ հրապարակաւ չբողոքել Մայիս 28-ի *ակտին* դէմ, որով Պ. Խատիսեանի նախարարութիւնը Ամբողջական Հայաստանի կառավարութիւն կը հռչակուէր, եւ այդ՝ Հանրապետութեան Պատուիրակութեան խնդրանքին վրայ, որ ինքն ալ ընդունելով թէ պէտք էր Երեւանի մէջ կատարուածը դարմանել, 1919 Յուլիս 18 թուականով հետեւեալ հեռագիրը տուաւ իր կառավարութեան.

«Փարիզի Հայ Ազգ. Պատուիրակութիւնը, որ կը ներկայացնէ Թուրքիոյ Հայերը, անընդունելի կը գտնէ այն պայմանները, որոնց մէջ հրատարակուած է Մայիս 28-ի Յայտարարութիւնը Երեւանի մէջ: Դարմանելու համար զայդ, անիկա մեզի կ'առաջարկէ կարգադրութեան եղանակ մը, երկուստեք հաւանութեամբ կազմելու համար Ամբողջական Հայաստանի միակ խորհրդարանը եւ կառավարութիւնը: Այդ նպատակով անիկա Առաքելութիւն մը պիտի դրկէ Երեւան: Հետեւաբար կը խնդրենք նոր խորհրդարանի կողմէն այդ Յայտարարութեան վաւերացումը յետաձգել՝ սպասելով որ տեղդ հասնին պատգամաւորները, որոնք շուտով կը մեկնին այս տեղէն դէպի Երեւան, իրենց հետ բերելով մեր եւ Ազգ. Պատուիրակութեան մանրամասն հրահանգները»:

Երկու Պատուիրակութիւններու միջեւ բանակցութիւնները կատարեալ համաձայնութեան մը չյանգեցան եւ կարծիքներու տարբերութիւն եղաւ կարգ մը կէտերու մասին: Ազգ. Պատուիրակութիւնը Երեւան դրկեց ՊՊ. Վահան Թէքէեանէ եւ Նշան Տէր-Ստեփանեանէ բաղկացած առաքելութիւն մը, կառավարութեան հետ բանակցելու համար: Պատուիրակութիւնը խնդրեց միաժամանակ Երեւանի կառավարութեան նախկին անդամ Պ. Սամսոն Յարութիւնեանէ որպէս զի ինքն ալ անդամակցի այդ առաքելութեան, եւ Պ. Յարութիւնեան ընդունեցաւ:

Այդ բանակցութիւնները բոլոր կէտերու շուրջ համաձայնութեան մը չըլանգելով, *ընդհատուեցան* եւ ո՛չ թէ *խզուեցան*, ինչպէս ոմանք գրած են սըխալմամբ, ՊՊ. Թէքէեան եւ Տէր-Ստեփանեան պէտք տեսած ըլլալով Փարիզ վերադառնալ եւ խորհրդակցիլ Ազգ. Պատուիրակութեան հետ, որպէս զի այս վերջինը ինքը վերսկսի բանակցութեանց, խնդրին բոլոր մանրամասնութեանց ծանօթանալէ յետոյ:

Քիչ վերջը Պ. Խատիսեան նամակ մը ուղղեց Ազգ. Պատուիրակութեան՝ իր կողմէ պարզելով այն հակառաջարկները որոնք բանաձեւուած էին Երեւանի մէջ, կառավարութեան նշանակած բանագնացներուն կողմէ: Պ. Խատի-

սեան կը խնդրէր Ազգ. Պատուիրակութենէն որ ընդունի այդ հակառաջարկները: Ազգ. Պատուիրակութիւնը, նկատի ունենալով այն վճռական րոպէն ուր կը գտնուէինք Լոնտոնի Խորհրդաժողովի նախօրեակին, որոշեց ընդունիլ Պ. Խատիսեանի առաջարկութիւնները, եւ 1920 Յունուար 30 թուականով հետեւեալ հեռագիրը ուղղեց անոր.

«Ստացանք Ձեր նամակը որ կը պարունակէր Հանրապետութեան կառավարութեան առաջարկութիւնները, իբր հետեւանք՝ Միացեալ կառավարութիւն մը եւ խորհրդարան մը կազմելու համար մեր Պատգամաւորներու Երեսնի մէջ վարած բանակցութեանց: Ազգ. Պատուիրակութիւնը թէեւ սովորական ժամանակներու մէջ չպիտի կրնար ընդունիլ Ձեր առաջարկները, սակայն նկատի ունենալով հրամայական պահանջը համաձայնութեան մը յանգելու՝ իրականացնելու համար միութիւնը, հայրենասիրական պարտք կը համարի ընդունիլ Ձեր առաջարկները, պայմանաւ սակայն որ գոյութիւն ունեցող երկու Պատուիրակութիւնները անմիջապէս ձուլուին, Խաղաղութեան Վեհաժողովին ներկայանալու համար իբրեւ մէկ մարմին, եւ վերջ դնելու համար այն մեղադրանքներուն որոնք կ'ուղղուին մեզ թէ մենք միութիւն չենք ներկայացներ, ինչ որ կը վնասէ ազգային դատին: Կը խնդրենք հետեւաբար որ հեռագրական հրահանգ տաք Ձեր Պատուիրակութեան՝ անմիջական ձուլման համար եւ նոյնը նաեւ հեռագրով հաղորդէք մեզի: Հեռագրեցինք Սամսոն Յարութիւնեանի եւ Արշալոյս Մխիթարեանի, լիազօր իրաւունք տալով անոնց, որպէս զի, Ձեզի հետ համախորհուրդ, միացեալ կառավարութեան մը կազմութիւնը յառաջ բերեն, եւ տնօրինեն ուրիշ հարկ նկատուած լրացուցիչ կարգադրութիւնները»:

Պ. Խատիսեան Ազգ. Պատուիրակութեան իրեն ղրկած այս հեռագրին չէ պատասխանած մինչեւ հիմակ. մենք տեղեկացանք Պ. Սամսոն Յարութիւնեանի կովկասեան հայ լրագիրներու մէջ հրատարակած մէկ յօդուածէն թէ այս մասին կառավարութեան հետ իր կատարած բանակցութիւնները ո՛չ մէկ արդիւնքի յանգած են, եւ թէ ինքը իր առաքելութիւնը ձախողած կը նկատէ: Միւս կողմէ, լրագիրները հաղորդեցին Խատիսեանի նախարարութեան վերակազմութեան լուրը, եւ Պ. Խատիսեանի կազմած նոր նախարարութիւնը բացառապէս կազմուած է մէկ կուսակցութեան պատկանող կովկասահայ անդամներէ: Աւելի վերջը ստացուած լուրերու համաձայն, Պ. Խատիսեան հրաժարական տուած է եւ նախարարապետ նշանակուած է Պ. Օհանջանեան:

Միացեալ կառավարութիւնը եւ խորհրդարանը պիտի կազմուէին երբ Թրքական Դաշնագիրը ստորագրուէլէ, Հայաստանի սահմաններու հարցը կարգադրուէլէ եւ Թրքահայաստանի գրաման գործը կատարուէլէ յետոյ, Հայ ժողովուրդը բնականոն պայմաններու մէջ կատարէ[ր] Սահմանադիր Ժողովի մը գումարումը, ձեռնարկելու համար Միացեալ խորհրդարանի եւ կառավարութեան ընտրութեան:

Միացման ծրագրի բանակցութեանց վերաբերող պատմական այս հակիրճ տեսութեանց մէջ մենք չուզեցինք, նկատի ունենալով Կովկասի այժմու ծանր դրութիւնը, մտնել մանրամասնութեանը մէջ վէճի առարկայ եղող այն կէտերուն որոնք արգելք հանդիսացան այնքան ցանկալի միացման գործին իրականացման:

Մենք կը խորհինք որ մեր պարտականութիւնն է զգուշանալ արծարծել այն հարցերը որոնք կարող են կրկին հրահրել տարակարծութիւններն ու վէճերը, այնպիսի ժամու մը ուր համերաշխութիւնը ամէն ժամանակէ աւելի հրամայական է, եւ ուր մեր բոլոր ուժերը պէտք են կեդրոնանալ, մեր բոլոր ջանքերը պէտք են միանալ օգնելու համար մեր Հանրապետութեան իր անցուցած այժմեան ճգնաժամին մէջ:

*

Իր կազմութենէն անմիջապէս վերջ, Ազգ. Պատուիրակութիւնը Համագումարի ցուցմունքներուն համաձայն, կազմեց «փրօփականտ»ի Յանձնախումբ մը, ներգաղթի եւ վերաշինութեան Յանձնախումբ մը եւ ֆինանսական Յանձնախումբ մը:

Պատուիրակութիւնը պաշտօն յանձնեց ՊՊ. Չօպանեանի եւ Թէքէեանի որպէս զի կազմեն «փրօփականտ»ի Յանձնախումբը: Այդ Յանձնախումբին անդամակցելու հրաւիրուեցան Տիկին Զապէլ Եսայեան, ՊՊ. Ֆնտըզլեան, Դաւիթ-Բեկ, Թահմազեան, Հանըմեան, Պասմաճեան եւ Սաֆրաստեան: ՊՊ. Ֆնտըզլեան եւ Սաֆրաստեան որոշ ժամանակ մը վերջ Փարիզէն հեռանալ պարտաւորուելով, ստիպուեցան դադրեցնել իրենց աշխատակցութիւնը, եւ անոնց տեղ Յանձնախումբի անդամակցութեան հրաւիրեց Պ. Արամ Անտոնեանը: Մասնաւոր տեղեկագիր մը պիտի կարդացուի Համագումարի յառաջիկայ նիստերէն մէկուն մէջ այդ Յանձնախումբի գործունէութեան մասին:

Ֆինանսական Յանձնախումբը, որուն կը նախագահէր մեր պաշտօնակիցը՝ Տօթթ. Նեվրուզ, բաղկացած էր հետեւեալ անձնավորութիւններէն.- ՊՊ. Աճէմօֆ, Էսմէրեան, Ֆնտըզլեան, Կիւլպէնկեան, Տիգրան խան Քէլէկեան, Մարաշեան, Ներսէս խան Ներսէսեան, Առաքէլ պէյ Նուպար, Սինապեան եւ Թնկըր: Բազմաթիւ նիստերու ընթացքին՝ այդ Յանձնախումբը խորհրդակցութիւններ կատարած է այն միջոցներու մասին որոնցմով կարելի էր իրականացնել Համագումարի պիտճէն.- «Արտաքին փոխառութիւն, ներքին փոխառութիւն, Ազգային Հանգանակութիւն»: Վերջապէս անիկա, Պ. Գալուստ Կիւլպէնկեանի խորհուրդին վրայ, կանգ առած է Ազգ. մեծ հանգանակութիւն մը կազմակերպելու ծրագրին վրայ:

Տօթթ. Նեվրուզ մեր յառաջիկայ նիստերէն մէկուն մէջ Ձեզի պիտի կարդայ այս մասին յատուկ տեղեկագիր մը: Ազգ. Պատուիրակութիւնը առաջարկեց Հանրապետութեան Պատուիրակութեան որպէս զի միասին կատարեն այդ հանգանակութիւնը, բայց այս վերջինը նախամեծար համարեց որ կոչը Ազգ. Պատուիրակութեան կողմէ միայն ստորագրուի, քանի որ

Հանրապետության Պատուիրակությունը կը ներկայացնէ կառավարութիւն մը որ ունի իր պիտոճէն եւ եկամտի աղբիւրները:

Ազգ. Պատուիրակութեան կողմէ ամբողջ ազգին ուղղուեցաւ ուրեմն Շրջաբերական կոչ մը՝ հանգանակութեան համար: Այդ հանգանակութիւնը սակայն դժբախտաբար չտուաւ սպասուած արդիւնքը:

Ազգ. Պատուիրակութիւնը իր տրամադրութեան տակ ունեցած է, իր կազմութեան օրէն մինչեւ 1920 Ապրիլի վերջ՝ 2.515.450 ֆր. 95. [սանթիմ]

Այս գումարը տրամադրուած է հետեւեալ կերպով.

Օգնութեան գործին	1.602.720,99
Փրօփականտի համար	276.656,90
Առաքելութեանց եւ դիւանագիտական ծախքերու համար	<u>579.298,57</u>
	2.458.676,46

Պատուիրակութեան մօտ պատրաստ

կը մնայ ուրեմն ի 1 Մայիս 1920, ֆրանք 56.774,49

2.515.450,95(*)¹²

Վերաշինութեան եւ ներգաղթի Յանձնաժողովը, որուն նախագահն էր Դուրեան Եղիշէ Սրբազան, կը բաղկանար հետեւեալ անձերէն.- Պատուիրակութեան անդամներ Փրոֆ. Տէր Յակոբեան եւ Պ. Փաստրմաճեան, ՊՊ. Պասմաճեան, Լեւոն Շանթ, Ա. Կէվրէկ, Ա. Խաչատուրեան, Ճ. Մալքօմ, Զ. Մաթիկեան, Վ. Փափագեան, Ս. Սվաճեան, Ա. Թերզիպաշեան: Յանձնաժողովը բազմաթիւ նիստեր ունեցաւ խնդիրը ուսումնասիրելու համար, եւ իր աշխատութիւնները դադրեցուց, զանոնք վերսկսելու մտադրութեամբ այն րոպէին երբ Թրքական Հայաստան ներգաղթը կարելի պիտի ըլլար:

Պատուիրակութիւնը ինքն իսկ մտածեց արդէն թէ ընդհանուր ներգաղթի մը համար կոչ մը ուղղելու ժամը չէր եկած, քանի որ վեց նահանգները դեռ գրաւուած չէին Հայ ու Դաշնակից զօրքերով: Նոյն իսկ, իր գործունէութեան առաջին ամիսներուն մէջ, հեռագիրներ դրկեց Պաղտատ եւ քանի մը ուրիշ տեղեր ուր տարագիրներ կը գտնուէին, խորհուրդ տալով անոնց որ չդառնան վեց նահանգները եւ մնան ժամանակաւորապէս ուր որ կը գտ-

¹² Անտոնեան ծանօթագրած է. «(*) Պ. Անտոնեանի ընդհատած տեղէն մինչեւ այս տեղ թարգմանեց Պ. Արտաազգ Հանըմեան»: Մեր կողմէ հարկ կը տեսնենք անել-ցնել թէ, եթէ Անտոնեանի մաքրագիր ատենագրութիւնն ամբողջութեամբ պահպանուած ըլլար, տրամաբանական պիտի ըլլար տեղեկագրի վերջաւորութեան ակնկալել այսպիսի ծանօթագրութիւն մը իր կողմէ. (*) Պ. Հանըմեանի ընդհատած տեղէն մինչեւ այստեղ թարգմանեց Պ. Արշակ Չօպանեան, բացի Թրքական Պատուիրակութեան յանձնուած Խաղաղութեան Դաշնագրի յօդուածները ներկայացնող հատուածէն:

նուին, կամ համախմբուին Կիլիկիա, որ գրաւուած էր Անգլիացիներու եւ Ֆրանսացիներու կողմէ:

Իրաւ է որ բազմաթիւ տարագիրներ դարձան հակառակ ատոր Խարբերդի եւ Սվազի վիլայէթները. ուրիշներ, աւելի ստուար թուով, ուղղուեցան դէպի Կիլիկիա, ո՛չ միայն Պատուիրակութեան խորհուրդին հետեւելով, այլեւ անգլիական եւ ֆրանսական իշխանութեանց խորհուրդին:

Ազգ. Համագումարի խմբագրած ուղեգիծը կը թելադրէր նաեւ կազմութիւնը զինուորական Յանձնախումբի մը: Պատուիրակութիւնը կը խորհէր զայն կազմել Անդրանիկ, Բագրատունի եւ Ղորղանեան զօրավարներով՝ մի քանի օժանդակներու հետ, բայց Անդրանիկ եւ Բագրատունի զօրավարներ Ամերիկա մեկնելով՝ այդ ծրագիրը մէկդի թողուեցաւ, եւ Ջօր. Ղորղանեանն է որ միայնակ ըրաւ այդ բոլոր աշխատանքը, իբր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան զինուորական խորհրդական:

Բժշկական Յանձնախումբ մը որ Համագումարի հաւաքումէն առաջ կազմուած էր նախկին Պատուիրակութենէն, Ատանայի մէջ Հայկական Հիւանդանոց մը հիմնելու նպատակով՝ պահպանուեցաւ նոր Պատուիրակութենէն եւ կանոնաւորապէս շարունակեց իր աշխատութիւնները: Հիւանդանոցը հիմնուեցաւ եւ մեծապէս օգտակար եղաւ մեր այնտեղի հայրենակիցներուն: Յանձնախումբը զբաղեցաւ նաեւ բժշկական օգնութեանց կազմակերպութեամբ եւ ուղարկումով այն հայ կեդրոնները ուր ատոր պէտք կար: Տըքթ. Նեվրուզ պիտի կարդայ Ձեզ տեղեկագիր մը այս մասին:

Այն բազմաթիւ դիմումներուն մէջ, զորս Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ըրած է Համագումարէն գծուած գործունէութեան ծրագիրը իրագործելու համար, պիտի յիշենք անոնք որ կատարուեցան Դաշնակիցները մղելու համար Հայկական նահանգներու գրաւման օգնելու, ինչպէս եւ յաջողցնելու փոխառութիւն մը Հայկական Հանրապետութեան համար, յետոյ՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի նպաստամատոյց գործին համար: Այս դիմումները դժբախտաբար չյաջողեցան:

Պիտի յիշենք նաեւ դիմումները որ կատարուեցան այն տուգանքներուն համար զոր Թուրքիա պէտք է վճարէ, եւ այն հատուցմանց եւ յափշտակուած ինչքերու վերադարձումին համար զոր ան պէտք է ընէ Հայ ազգին, ինչպէս եւ ապահովելու համար պատժուիլը անոնց որ պատերազմի միջոցին Հայոց դէմ գործուած ոճիրին մասնակցեցան: Այս դիմումները նպաստաւոր ընդունելութիւն գտան, եւ անոնք մեծ մասամբ հաշտի առնուած են Թուրքիոյ պարտադրուած Հաշտութեան Դաշնագրին մէջ:

Ազգ. Պատուիրակութիւնը մշտական յարաբերութիւն պահպանած է Հայ կեդրոններու հետ, մասնաւորաբար Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին եւ Ամերիկայի Ազգային Միութեան հետ, ինչպէս Հայ Հանրապետութեան Պատուիրակութիւնը Երեսնի կառավարութեան հետ:

Պատուիրակութիւնը Ամերիկեան հայանպաստ Յանձնախումբէն ձեռք ձգած է Հայոց դրկուած նպաստի գումարներուն կրկնումը. այսպէս, շատ անգամներ, Փարիզէն Պատուիրակութեան կողմէ, կամ մեր Ամերիկայի կազմակերպութեանց կողմէ դրկուած գումարները կրկնուեցան¹³ Ամերիկեան Նպաստամատոյց Յանձնախումբէն: Երախտագիտութեամբ կը յիշատակենք Հայութեան հանդէպ Ամերիկեան վեհանձնութեան այս նոր վկայութիւնը:

Պատուիրակութիւնը դիմումներ ըրած է ապահովելու համար մահմէտականացած Հայոց ազատութիւնը իրենց նախկին կրօնքին դառնալու, եւ Մահմէտականաց քով գերի մնացած կանանց եւ տղոց ազատումը ստանալու համար: Հաշտութեան Դաշնագրին մէջ այս խնդիրները հաշուի առնուած են:

Համագումարէն տրուած ուղեգիծը Պատուիրակութեան վրայ պարտք կը դնէր պահանջել¹⁴ Հայաստանի թուրքերուն փոխադրութիւնը Փոքր Ասիոյ այն թուրք հողամասերուն մէջ որ թուրք տէրութեան մաս պիտի կազմէին, ինչպէս եւ արտաքսումը բոլոր այն քիւրտերուն որ ջարդերուն մասնակցած են: Այս ուղղութեամբ դիմումներ եղած են, բայց ակնբերելի է որ արդի պայմաններուն մէջ այսպիսի պահանջներ ո'նէ: Կաւանակնութիւն չունին Դաշնակիցներէն ընդունուելու. յանցաւորներու պատժուելուն մասին, յոյս կայ որ գլխաւոր պատասխանատուները դատի քաշուին, բայց անշուշտ անխոհեմ պիտի նկատեն դատի քաշել կամ արտաքսել բոլոր անոնք, ա'յնքան բազմաթիւ, որ կոտորածներուն եւ տեղահանութեանց մասնակցեցան:

Դաշնագրին մէջ, փոխադարձ գաղթումներու վերաբերեալ յօդուածով, նախատեսուած է որ թուրքեր եւ քիւրտեր պիտի կարենան իրենց կամքով հեռանալ հայ տէրութեան հողերէն, երբ այս տէրութիւնը ամբողջապէս կազմուի. անոնց համար՝ որ պիտի մնան՝ հայ տէրութիւնը պարտաւոր է յարգել փոքրամասնութեանց օրէնքը:

Պատուիրակութիւնը դիմեց Պէլժ ու Ռումէն կառավարութեանց, խնդրելով որ անոնք Հաշտութեան Վեհաժողովին մօտ ուժ տան հայկական պահանջներուն. այդ երկու կառավարութիւնները ջերմագին ընդունելութիւն ըրին Պատուիրակութեան դիմումին եւ ի նպաստ Հայաստանի կոչ ուղղեցին Դաշնակիցներուն: Միեւնոյն կոչը ինքնաբերաբար ուղղուած էր ար-

¹³ Բառը գործածուած է կրկնապատկումի նշանակութեամբ:

¹⁴ ՀԱՊի արխիւին Փարիզէն փոխադրուելով եւ ՀԱԱին մէջ պահպանուող համապատասխան թղթածրարին (կամ հայրենական անուանումով՝ գործին) մէջ դրժ-բախտաբար կը բացակայի շարունակութիւնը Անտոնեանի մաքրագրած օրինակին, որով տեղեկագիրը ամբողջացնելու նպատակով յետագայ շարադրանքին համար նկատի ունեցած ենք՝ չնչին բացառութիւններով՝ մաքրագրեալ այն օրինակը, որ կազմուած է Թէքէեանի, Անտոնեանի, Հանըմեանի եւ Զօպանեանի թարգմանած բաժիններուն համադրումով (ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 54):

դէն Զուիցերիոյ կողմէ. իսկ յոյն կառավարութիւնը Հայկական դատը միշտ պաշտպանեց Դաշնակիցներուն մօտ:

Պատուիրակութիւնը ջանաց սիրալիր յարաբերութիւններ ունենալ Արաբներու, Սուրիացիներու, Փարիզի եւ Լոնտոնի մէջ Ռուսիոյ ներկայացուցիչներու, Սիօնականներու, Յոյներու եւ Պարսիկներու հետ: Բարեկամական յարաբերութիւններ ունեցաւ Ասորի-Քաղդէացիներու ներկայացուցիչներուն հետ, եւ անոնց հետ միասնաբար քանի մը դիմումներ ըրաւ Վեհաժողովին մօտ:

Գալով Վրացիներու եւ Ատրպատականցիներու, արդէն յիշեցինք բանակցութիւնները, զոր[ս] Պատուիրակութիւնը ունեցաւ անոնց հետ Փարիզ, Լոնտոն եւ Սան-Ռէմօ, բանակցութիւններ որ ինչպէս քիչ առաջ ցոյց տուինք, դժբախտաբար ձախողեցան, բայց զոր անհրաժեշտ է վերսկսիլ անմիջապէս որ պարագաները թոյլ տան:

Պոնտոսի Յոյներու Մասնախումբին հետ բանակցութիւններ արդէն ըսկսած էին Հայկ. Համագումարի ներկայացուցիչներուն կողմէ, անցեալ տարի, Պոնտական Մասնախումբին հրաւերով. այդ բանակցութիւնները շարունակուեցան յետոյ Պատուիրակութեան եւ Պոնտոսի Յոյներուն միջեւ. անոնք համաձայնութեան մը չյանգեցան, որովհետեւ Յոյները կ'ուզէին կազմութիւնը երկու տէրութեանց, Հայաստանի եւ Պոնտոսի տէրութեանց՝ դաշնակցական կապով մը միացած, մինչ Հայերը նախընտրելի կը գտնէին հարցը լուծել ըստ Պ. Վենիզէլոսի Հաշտութեան Վեհաժողովին մատուցած Յիշատակագրով ըրած առաջարկին, այսինքն այդ նահանգը միացնել Հայաստանին՝ լայն ինքնավարութեան ռեժիմով մը: Այդ բանակցութեանց խզման հետեանքով, Պոնտ[ա]ցի Յոյները պայքար մը սկսան լրագրաց ու Հաշտութեան Վեհաժողովի շրջանակներուն մէջ՝ Հայոց դէմ, տիրամոլութիւն վերագրելով անոնց. Քրիզանթոս Եպիսկոպոսը, Տրապիզոնի Յունաց Առաջնորդ, Փարիզ եկած ըլլալով, Պատուիրակութիւնը անոր հետ վերսկսաւ բանակցութիւնները, եւ կարելի եղաւ բանաւոր համաձայնութեան մը հասնիլ, որուն արդիւնքը եղաւ Պոնտոսեան Յոյներու պայքարէն դադարումը: Պատուիրակութիւնը յայտարարեց թէ պիտի չպնդէ Տրապիզոնի նահանգի մասին իր պահանջին վրայ, պահանջ զոր իր յիշատակագրին մէջ մտցուցած էր Պ. Վենիզէլոսի առաջարկով, եւ թէ՛ պիտի շատանար Տրապիզոն քաղաքի արեւելեան կողմը գտնուող Սեւ ծովու ափունքով:

Պատուիրակութիւնը բանակցութիւններ ունեցաւ Հաշտութեան Վեհաժողովին մօտ Քիւրտերու պատուիրակ Շէրիֆ փաշայի հետ, համաձայնութեան մը հասնելու համար: Այդ քայլն առաւ խորհուրդովը Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին, որ ի՛նքն իսկ Պոլսոյ Քիւրտ Ազգային Ակումբին հետ խօսակցութիւններ ունեցած էր, եւ հրաւիրած էր Պատուիրակութիւնը Շէրիֆ փաշայի հետ բանակցիլ համաձայնութեան մը յանգելու համար: Զերմօրէն մղուեցաւ մանաւանդ Դաշնակից Պատուիրակութիւններէն՝ Քիւրտերուն հետ համաձայնութեան մը կնքումը: Համաձայնութեան մը ծրագիրը վեճի

դրուեցաւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան նիստերէն մէկուն մէջ, որուն ներկայ էր Պ. Ահարոնեան եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ: Այդ Քրտո-Հայկական համաձայնութեան բնագիրը խմբագրուեցաւ յետոյ, եւ ստորագրուելով՝ մէկ կողմէ՝ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս փաշայէ եւ Պ. Ահարոնեանի բացակայութեանը՝ Հանրապետութեան Պատուիրակութեան փոխանորդաբար նախագահ Պ. Օհանջանեանէ եւ միւս կողմէ՝ Շէրիֆ փաշայէ, դրկուեցաւ Հաշտութեան Վեհաժողովին:

Պ. Փաստրմաճեան, Հայ Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Ամերիկայի մէջ, այդ համաձայնութիւնը քննադատեց եւ ի նշան բողոքի իր հրաժարականը տուաւ Ազգ. Պատուիրակութեան եւ Համագումարի անդամակցութենէ: Իր քննադատութիւնները լրագրաց մէջ ամբողջ բանակոի մը յարուցին: Պատուիրակութիւնը բաւականացաւ հակիրճ զեկոյցով մը այդ քննադատութեանց պատասխանելով: Համաձայնութիւնը աւելի եւս բուռն բանակոի մը յառաջ բերաւ Թրքաց եւ Քրտաց միջեւ Պոլսոյ թերթերուն մէջ: Շէրիֆ փաշա հրատարակեց «Մաթէն»ին, «Թան»ին, «Թայմզ»ին մէջ քանի մը նամակներ, ուր իրեն դէմ Թուրքերու կողմէ ուղղուած յարձակումներէն ազդուած, համաձայնութեան իմաստը կը խեղաթիւրէր, իր ստորագրած դաշինքէն կը հեռանար, ի միջի այլոց պաշտպանելով Սուլթանին վեհապետութեան տակ մնացած ինքնավար եւ ոչ-երկնդած Քիւրտիսթանի մը կազմութիւնը, փոխանակ անկախ Քիւրտիսթանին, զոր պահանջած էր վերոյիշեալ համաձայնագրով: Քիւրտերէ մաս մը, Պոլսոյ լըրագրաց մէջ իրենց ըրած յայտարարութեանց համեմատ, կը թուին հաւատարիմ մնալ ուզել Համաձայնագրին, որ անկախ Քիւրտիսթանի մը կազմութիւնը կը պահանջէր. սիրալիր յարաբերութիւններ հաստատուեցան Պոլսոյ մէջ այդ ազգասէր Քիւրտերուն եւ Հայոց միջեւ: Միւս կողմէ՝ Վանի եւ Պիթլիսի նահանգները, որոնց Հայաստանի տրուելուն դէմ կը բողոքէր Շէրիֆ փաշա իր վերոյիշեալ նամակներուն մէջ, հայկական նահանգներէն ճիշդ անոնք են, զոր Դաշնակիցները որոշած են առանց վէճի Հայ պետութեան միացնել:

Ազգային Համագումարը կը հաւաքուի այն պահուն իսկ ուր Թուրքիոյ պարտադրուած դաշնագիրը Թուրք Պատուիրակութեան կը յանձնուի: Ուրեմն իրապէս Հայկական Հարցի լուծման ժամն է, դժբախտաբար այդ լուծումը չէ ստացուած, նոյն իսկ այս ժամուն, որոշ ու վճռական ձեւով մը:

Նախագահ Վիլսոնի պատասխանը դեռ չէ հասած, եւ դաշնագիրը առկա կը ձգէ Հայաստանի սահմաններուն հարցը, հարկադրելով միայն թիւրքերը ընդունիլ ինչ որ նախագահ Վիլսոն պիտի որոշէ այդ մասին: Հաշտութեան Վեհաժողովը յստակօրէն յայտնած է իր որոշումը վերածեալ Հայաստան մը կազմելու մասին, Ամբողջական Հայաստանի ծրագրի մասին այլեւս խօսք չկայ. վերջին ճառին մէջ, զոր կ'արտասանէր խորհրդարանին մէջ, Պ. Լոյստ ճորճ տեսակ մը հեզնութեամբ կը խօսէր Ամբողջական Հա-

յաստանի մը նկատմամբ հայոց պահանջներու մասին, որ՝ կ'ըսէր հսկայական բան մը ունին: Գերագոյն Խորհուրդը նախագահ Վիլսընի կարծիքն ուզած է միմիայն Էրզրումի, Վանի, Պիթլիսի եւ Տրապիզոնի նահանգներու մասին: Կիլիկիոյ, ինչպէս եւ Խարբերդի, Սվազի եւ Տիարպէքիի վիլայէթներուն նկատմամբ, Խորհուրդը որոշած է որ անոնք պէտք է շարունակեն մաս կազմել Օսմանեան Պետութեան: Այդ բոլոր երկրամասերուն մէջ, Հայերը ո՛չ այլ ինչ պիտի ստանան, եթէ Պատուիրակութեան խնդրանքը չընդունուի, եթէ ոչ փոքրամասնութեանց օրէնքին օգտագործումը: *Քէ տ'Օրսէյին* մէջ մեզի կը յայտարարեն թէ այդ շրջաններուն մէկ մասին մէջ Դաշնակիցներու անունով փոքրամասնութեանց պաշտպանութեան վերահսկողութիւնը հաւանօրէն Ֆրանսայի պիտի յանձնուի. անձկութեամբ կ'սպասենք նախագահ Վիլսընի կարծիքը Հայաստանի սահմաններուն մասին եւ կը յուսանք որ ամերիկեան Ծերակոյտը պիտի գոնէ որոշէ որ Միացեալ-Նահանգները մասնակցին այն օգնութեան, զոր Դաշնակիցները որոշած են տալ կազմուելու վրայ եղող Հայ Տէրութեան:

Կացութիւնը որ բաւական շփոթ է, աւելի է՛ւս կը կնճռոտի Պոլշէվիքներու Կովկաս մտնելովը. Պոլշէվիք կառավարութիւնը, իր առաջին օրերէն, հրովարտակով մը ճանչցած էր Թրքահայոց իրաւունքը՝ այն միջոցին Ռուսերէ գրաւուած Կովկասի սահմանակից երեք նահանգներու անկախութիւնը պահանջելու. պիտի ունենա՞յ միեւնոյն դիրքը՝ միացեալ անկախ Հայ տէրութեան նկատմամբ, հիմա որ կը ներկայանայ իբր դաշնակից մը Ատրպատականի Թաթարներուն եւ Քէմալեան Թուրքերուն:

Դաշնագիրը որ յանձնուեցաւ Թրքական Պատուիրակութեան, կը պայմանադրէ ստեղծումը ազատ եւ անկախ Հայ միացեալ տէրութեան մը, եւ Հայ ազգին կուտայ իրաւունք ստորագրելու, ի շարս Դաշնակից ազգերու, Թուրքիոյ պարտադրուած դաշնագիրը, վերապահելով հանդերձ Անդրկովկասեան շրջանին վիճելի հողամասերուն խնդրոյն լուծումը՝ Հայոց, Վրացոց եւ Թաթարաց միջեւ համաձայնութեան մը, եւ նախագահ Վիլսընի թողլով իրաւախօսութիւնը Հայ Տէրութեան եւ Թուրքիոյ միջեւ սահմաններու որոշման մասին:

Ահա Դաշնագրին այն յօդուածները որ Հայ Տէրութեան կը վերաբերին.¹⁵
«Մէկ կողմէ՝

«Բրիտանական կայսրութեան, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճաբոնի,

«Որոնք ներկայ դաշնագրին մէջ նշանակուած են իբր գլխաւոր Դաշնակից պետութիւններ,

¹⁵ Զօպանեան չէ թարգմանած յաջորդող չակերտեալ պարբերութիւններն ու յօդուածները: Ան ուղղակի անցած է աստղանիշին յաջորդող եզրափակիչ պարբերութիւններուն: Դաշնագրի յօդուածներուն վերաբերող այս միջանկեալ ձեռագիր բընագրին մէջ մանիշակագոյն մելանով կատարուած են հպումներ: Զնջեալ բառերը կամ հատուածները կը ներկայացնենք ջնջում յատկանշող գծիկաւոր տառերով:

«Հայաստանի, Պելճիբայի, Յունաստանի, Հիճազի, Բոլոնիոյ, Բորթուկայի, Ռումանիոյ, Սերպիո-Խրուաթ-Սլովէն պետութեան եւ Չեխո-Սլովաքիոյ, «Որոնք վերոյիշեալ պետութեանց հետ կը կազմեն Դաշնակից Պետութիւնները,

«միջեւ.

«Միւս կողմէ,

«Թիւրքիոյ միջեւ,

«կնքուած է եւայլն.»

Այս կերպով կ'սկսի Հաշտութեան այն Դաշնագիրը որ յանձնուեցաւ Օսմանեան Կայսրութեան լիազօր Պատուիրակներուն:

2. Գլուխ

Հայաստան

Յօդ. 88.- Թիւրքիա ~~ներկայ Դաշնագրով~~ կը ճանչնայ Հայաստանը իբր ազատ եւ անկախ պետութիւն, ինչպէս արդէն ճանչցած են Դաշնակից Պետութիւնները:

Յօդ. 89.- Թիւրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ միւս ստորագրող բարձր կողմերը կը հաւանին Միացեալ-Նահանգներու Նախագահին իրաւարարութեան ենթարկել Թիւրքիոյ եւ Հայաստանի միջեւ նշանակուելիք սահմանները, Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Պիթիսի վիլայէթներուն մէջ, եւ ընդունիլ անոր որոշումը, ինչպէս նաեւ ո'ւեւ տնօրինութիւն զոր պիտի ընէ՝ դէպի ծով Հայաստանի ելք մը տալու եւ Հայ-Թիւրք սահմանագլուխին Թրքական կողմի ո'ւեւ մէկ մասը ~~ամբողջութիւն~~ զինաթափ ընելու մասին:

Յօդ. 90.- Այն պարագային որ¹⁶ սահմաններու որոշումը 89^{րդ} Յօդուածին համաձայն այդ վիլայէթներուն մէկ մասը կամ ամբողջութիւնը Հայաս-

¹⁶ Հայրմներու ենթարկուած բնագրին մէջ՝ ու: Իր ամբողջութեան մէջ՝ բնագրային հատուածը կը ներկայանայ հետեւեալ ձեւով, ուր շեղագրած ենք յանելումներն ու գծիկաւոր տառերով զատորոշած ջնջումները. «Այն պարագային ու [կարդալ՝ որ-Վ.Ղ.] սահմաններու որոշումը, 89^{րդ} Յօդուածին համաձայն, ~~երբ սահմանները որոշուին, եւ~~ այդ վիլայէթներէն ու մէկ մասը կամ ամբողջութիւնը Հայաստանի փոխանցուի, Թիւրքիա՝ ~~ներկայ Դաշնագրով~~ այժմէն կը յայտարարէ թէ կը հրաժարի այդ փոխանցուած հողամասերուն վրայ իր ամբողջ իրաւունքներէն, ու փոխդոսներէն, որոշման թուականէն սկսելով: Թիւրքիայէն բաժնուած ուրիշ հողամասերու մասին ~~ներկայ այս~~ Դաշնագրին պարունակած տրամադրութիւնները, ~~ներկայ վարկեանէն իսկ~~ գործադրելի պիտի ըլլան նաեւ այդ հողամասերուն նկատմամբ:

Համեմատութիւնն ու բնոյթը Թիւրքիոյ այն ելեւմտական պարտաւորութեանց, զորոս Հայաստան պիտի ստանձնէ, ինչպէս նաեւ այն իրաւունքները զորս Հայաստան պիտի ստանայ վերոյիշեալ հողամասերուն փոխանցման իր վեհապետութեան ենթարկման հետեւանքով, պիտի որոշուին ներկայ Դաշնագրին Ը. մասին (Ելեւմտական տրամադրութիւններ) 241-244 Յօդուածներուն համաձայն:

Եթէ պէտք ըլլայ, յետագայ Համաձայնութիւններով պիտի լուծուին այն ամբողջ խնդիրները, որոնք ներկայ Դաշնագրով որոշուած չեն եւ որոնք կրնան ծագիլ

տանի փոխանցել, Թիւրքիա՝ այժմէն կը յայտարարէ թէ կը հրաժարի այդ փոխանցուած հողամասերուն վրայ իր ամբողջ իրաւունքներէն ու տիտղոսներէն, որոշման թուականէն սկսելով: Թիւրքիայէն բաժնուած ուրիշ հողամասերու մասին այս Դաշնագրին պարունակած տրամադրութիւնները, ներկայ վայրկեանէն իսկ գործադրելի պիտի ըլլան նաեւ այդ հողամասերուն նկատմամբ:

Համեմատութիւնն ու բնոյթը Թիւրքիոյ այն ելեւմտական պարտաւորութեանց, զորս Հայաստան պիտի ստանձնէ, ինչպէս նաեւ այն իրաւունքները զորս Հայաստան պիտի ստանայ վերոյիշեալ հողամասերուն իր վեհապետութեան ենթակման հետեւանքով, պիտի որոշուին ներկայ Դաշնագրին Ը. մասին (Ելեւմտական տրամադրութիւններ) 241–244 Յօդուածներուն համաձայն:

Եթէ պէտք ըլլայ, յետագայ Համաձայնութիւններով պիտի լուծուին այն ամբողջ խնդիրները, որոնք ներկայ Դաշնագրով որոշուած չեն եւ որոնք կրնան ծագիլ վերոյիշեալ հողամասերու փոխանցման հետեւանքով:

Յօդ. 91¹⁷.– Այն պարագային՝ երբ 89^{րդ} Յօդուածին մէջ յիշուած հողամասերէն մաս մը Հայաստանի անցնի, այս որոշումէն մինչեւ երեք ամիս պիտի նշանակուի սահմանագլուխներու գծման Յանձնախումբ մը, որուն կազմը յետագային պիտի նշանակուի, եւ որ՝ Հայաստանի ու Թիւրքիոյ սահմանները պիտի գծէ տեղին վրայ, նոյն որոշման համաձայն:

Յօդ. 92.– Հայաստանի, Ատրպատականի եւ Վրաստանի միջեւ սահմանները փոխադարձաբար պիտի որոշուին այս պետութեանց համաձայնութեամբ: Այն պարագային ուր այս պետութիւնները, մինչեւ 89^{րդ} Յօդուածին մէջ նախատեսուած որոշման կայանալը՝ չկարենան գոյացնել այդ համաձայնութիւնը, յիշեալ սահմանները պիտի որոշուին Դաշնակից գլխաւոր պետութեանց կողմէ, որոնք տեղւոյն վրայ պիտի կատարեն սահմաններու գծումը:

Յօդ. 93.– Հայաստան կ'ընդունի եւ կը համաձայնի Դաշնակից գլխաւոր պետութեանց հետ կնքուելիք դաշնագրով մը ստանձնել այն պարտաւորութիւնները, որոնք այդ պետութեանց կողմէ անհրաժեշտ պիտի նկատուին պաշտպանելու համար շահերը Հայաստանի բոլոր բնակիչներուն, որոնք ցեղով, լեզուով, ու կրօնքով կը տարբերին ժողովուրդին մեծամասնութենէն:

Հայաստան կ'ընդունի եւ կը համաձայնի Դաշնակից պետութեանց հետ կնքուելիք դաշնագրով մը ստանձնել այն պարտաւորութիւնները, որոնք

վերոյիշեալ հողամասերու փոխանցման հետեւանքով»: (Բաղդատել նաեւ 1946ին Գահիրէ լոյս տեսած Գաբրիէլ Լազեանի *Հայաստան եւ Հայ Դատը (վաերագրեր)* հատորով ներկայացուած բնագրին հետ (էջ 247), որ կը վերաբերի Սեւրի Դաշնագրին:

¹⁷ Այս եւ յաջորդ յօդուածները կը ներկայացնենք ուղղակի հայումներու գործադրութեամբ, առանց մանրամասնելու անոնց բնոյթը:

անհրաժեշտ պիտի նկատուին պաշտպանելու համար թրանզիթի ազատությունն ու արդար թեժիմ մը ուրիշ ազգերու վաճառականութեան համար:

Դաշնագրին մէջ կան ուրիշ յօդուածներ որ կը վերաբերին Հայ ազգաբնակ[չ]ութեանց որ պիտի մնան Թուրք տիրապետութեան սահմաններուն մէջ: Դաշնագրին մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ որ Հաշտութեան Վեհաժողովին մատուցուած Հայկական Յիշատակագրին մէջ գտնուող պահանջներուն մէկ մեծ մասը ընդունուած է: Մեզ շահագրգռող յօդուածներէն ոմանց մէջ՝ կան պակասներ կամ շփոթութիւններ, զոր[ս] պէտք է լրացնել կամ պարզել: Դիմումներ պէտք է ըլլոյն որ¹⁸ այս նպատակով: Այդ հարկաւոր դիմումներէն մին այն է զոր պէտք է ընել որպէս զի Հայ Տէրութիւնը Ազգերու Ընկերակցութեան անդամ ընդունուի, ինչպէս ընդունուած է Հիճազի Տէրութիւնը:

Այն պահուն ուր մեր դատը իրական յաջողութիւն մը կ'ունենայ, այն պահուն ուր Դաշնակիցները վերջնականապէս կը ճանչնան Հայաստանի իրական անկախութիւնը, մեր երկիրը կը գտնուի, նորագոյն դէպքերուն հետեւանքով, տազնապալից կացութեան մը մէջ: Մեծ դժուարութիւններ կը ցցուին իրագործման առջեւ այն խոստումներուն, զոր կը պարունակէ Դաշնագիրը, ու ծանր վտանգներ կ'սպառնան մեր ժողովուրդին: Մեծ ճիգ մը անհրաժեշտ է այս դժուարութեանց յաղթելու եւ այդ վտանգներուն առաջքն առնելու համար: Մենք լիայոյս ենք որ մեր ժողովուրդը ցոյց պիտի տայ պէտք եղած կորովը, իմաստութիւնը, միաբանութիւնը, եւ զոհաբերութեան ոգին՝ այս հուսկ տազնապալի յաղթելու եւ յաջողելու համար մեր ազգին դարաւոր երազը իրագործել՝ իսկապէս կազմելով Միացեալ Հայաստանը, վերածեալ բայց ճշմարտապէս անկախ ու կենսունակ:

Տեղեկագրին ընթերցումէն անմիջապէս ետք անոր քննարկումն սկսած ըլլալով, այսպեղ կը ներկայացնենք Արամ Անպոնեանի գրառած եւ իր իսկ ձեռագրով կատարուած բազմաթիւ ջնջումներով ու այլ հպումներով լի սեւագիր արենագրութեան այն բաժինը¹⁹, որուն մաքրագիր օրինակին չենք հանդիպած: Չծանրաբեռնելու համար նիւթը, զանց կ'առնենք հպումներու մանրամասնութիւններն ու ապայապաւեալ ձեւով կը ներկայացնենք կըրճարեալ բառերը- Վ.Ղ.:

Պ. Ա. Թէրզիպաշեան.- Կ'ուզէի գիտնալ թէ այս համարատուութեան ամբողջ գիծերու մասին Պատուիրակութեան բոլոր անդամներն ալ համաձայն են:

Պ. Ա. Չօպանեան.- Երբ դահլիճի մը անունով ընդհանուր յայտարարութիւն մը կ'ըլլայ, ոչ ոք կը փնտռէ թէ դահլիճին ո՞ր անդամը համամիտ է ա-

¹⁸ Զնչումը՝ մեր կողմէ: Դիտելի է թէ Չօպանեանի թարգմանութենէն կը բացակայի արտագրողին անուշադրութեան հետեւանքով սողոսկած այս անտեղութիւնը:

¹⁹ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 57, 5-24 համարակալումով թերթեր:

մէն մէկ ըստածին եւ ո՞րը ոչ: Սա միայն կրնամ ըսել թէ Պատուիրակութեան որոշումները տրուած են ընդհանրապէս միաձայնութեամբ, մերթ մեծամասնութեամբ:

Պ. Վ. Թէքէեան.- Կան որոշումներ եւ գործեր որոնք տրուած կամ կատարուած են Պատուիրակութեան այս կամ այն անդամին պաշտօնով բացակայութեան միջոցին: Այսպէս՝ Բրոֆ. Տէր-Յակոբեան բացակայ է քանի ատենէ ի վեր, կը գտնուի Ամերիկա յատուկ պաշտօնով: Ես ալ միեւնոյն ստիպմամբ բացակայեցայ երկար ժամանակ: Ասիկա ամբողջ Պատուիրակութեան համարատուութիւնն է եւ անշուշտ ընդհանուր գիծերուն մէջ ամէնքն ալ իւրացուցած ենք զայն:

Դուրեան Արքեպ.- Դիտողութիւն մը կ'ուզեմ ընել կարգ մը կէտերու մասին, որոնք մութ կը մնան Համարատուութեան մէջ: Օրինակ՝ Կիլիկիոյ համար ֆրանսական կառավարութեան մօտ եղած դիմումներուն ակնարկելով տեղեկագիրը կ'ըսէ թէ խոստում եղաւ որ «արմատական միջոցներ» ձեռք պիտի առնուին: Ի՞նչ են այդ արմատական միջոցները:

Պ. Չօպանեան.- Այսինքն օգնական զօրք պիտի դրկուի Կիլիկիա եւ պիտի զինուին Հայերը՝ ինքնապաշտպանութեան համար:

Դուրեան Արք.- Լաւագոյն չէ՞ր որ այդ պարագան բացորոշ կերպով արձանագրուէր տեղեկագրին մէջ:

Պ. Վ. Թէքէեան.- Այս տեղեկագրին խմբագրութեան ատեն տեսակէտ մըն ալ իր որոշ ազդեցութիւնն ունեցաւ: Մտածելով որ եթէ ոչ անոր ամբողջութիւնը, գոնէ զանազան մասերը կրնան հրատարակութեան տրուիլ եւ պէտք է տրուին, ըստ այնմ խմբագրուեցաւ, որպէս զի հրատարակութեան պահուն անպատեհութիւն մը չծագի:

Պ. Տէր-Սյրեփանեան.- Պատուիրակութիւնը երբ պէտք կը տեսնէր ժողովուրդը լուսաբանելու, նոյնքան եւ աւելի պէտք է մտածէր նախապէս Համագումարին տալու անհրաժեշտ լուսաբանութիւնները:

Պատգամաւորներէն ոմանք, Պ. Թէքէեանի առարկութեան անդրադառնալով, յարմար չգտան տեղեկագրին առ այժմ նոյն իսկ մասամբ հրատարակութիւնը:

Պ. Տէօվլէթեան փափաք յայտնեց որ տեղեկագիրը բազմագրուելով մէյ մէկ օրինակ տրուի բոլոր պատգամաւորներուն: Պ. Չօպանեան յոյս յայտնեց թէ քանի մը օրէն կարելի պիտի ըլլայ գոհացում տալ այդ բաղձանքին:

Պ. Բարսեղեանի պահանջման վրայ որոշուեցաւ Ազգ. Պատուիրակութենէն ստանալ Լոնտոնի մէջ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ ստորագրուած փոքրամասնութեանց իրաւունքներուն պատկանող պաշտօնագրին մէկ օրինակը:

Նոյնպէս՝ Պ. Թէրզիպաշեան պահանջեց Ազգ. Պատուիրակութենէն ըստանալ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ Լոնտոնի մէջ Գերագոյն Խորհուրդին տրուած տասնամեայ պիտոճի նախագիծը, որուն համար ըսաւ թէ չէ յիշատակուած տեղեկագրին մէջ:

Պ. Չօպանեան յայտնեց թէ այս նախագիծը կը գտնուէր այն ծանօթութեանց կարգին, որոնք ընդհանուր կերպով յիշատակուած են տեղեկագրին մէջ, զինուորական եւ հոգատար պետութեան ու Հայկական կառավարութեան յարաբերութեանց վերաբերող համաձայնագրի նախագիծերուն հետ, եւ որոնք Գերագոյն Խորհուրդին տրուեցան՝ լուսաբանելու համար Ազգերու Ընկերակցութեան Գործադիր Խորհուրդը Հայաստանի հոգատարութեան մանրամասնութեանց նկատմամբ: Համագումարը որոշեց այդ պիտոճէի նախագիծն ալ ստանալ Ազգ. Պատուիրակութենէն: Պ. Տիրան Տէօվլէթեանի առաջարկին վրայ, Համագումարը որոշեց նաեւ որ Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը բազմագրուելով բաժնուի պատուիրակներուն:

Պ. Թէրզիպաշեան յայտնելով թէ Համարատուութեան մէջ Հայ եւ Քիւրտ համաձայնութեան առթիւ Վանի եւ Պիթլիսի վիլայէթներուն Հայաստանի կցման մասին ապահովութիւն ստացուած ըլլալը ըսուած է, փափաքեցաւ գիտնալ թէ արդեօք Պատուիրակութիւնը կրցա՞ծ է գրաւոր կերպով ստանալ այդ ապահովութիւնը, քանի որ Շէրիֆ փաշա ալ կը պնդէ թէ այդ նահանգները կը պատկանին Քիւրտիսթանի:

Պ. Չօպանեան.- Գրաւոր պաշտօնական յայտարարութիւն մը չկայ:

Պ. Թէքէեան.- Սակայն կայ բան մը, զոր կարելի է ապահովութիւն մը նկատել, եւ ատիկա Գերագոյն Խորհուրդին կողմէ նախագահ Ուիլսոնի եղած իրաւարարութեան առաջարկն է, որուն մէջ որոշապէս յիշատակուած են նաեւ Վանայ ու Պիթլիսի նահանգները:

Տ. Զաւէն Պապրիարք.- Եթէ գրաւոր բան մը չկայ, գոնէ բերանացի շատ ապահովութիւններ տուած են, եւ ես վստահ եմ թէ նոյն իսկ Դաշնագրին մէջ պաշտօնապէս արձանագրուած կ'ըլլային ատոնք, եթէ նախագահ Ուիլսոնի դիմում ընելու պէտք չտեսնուէր:

Պ. Թէրզիպաշեան.- Բայց նոյն իսկ նախագահ Ուիլսոնի եղած առաջարկութեան ձեւէն յայտնի կ'ըլլայ թէ այս երկու վիլայէթներէն մասեր Հայաստանէն կրնան դուրս մնալ:

Պ. Չօպանեան.- Աւելի թանկագին ապահովութիւն մը ունինք այդ մասին: Լոնտոն երթալէ առաջ առիթ ունեցանք տեսնելու զինուորական քարտէս մը որ մտերմաբար ցոյց տրուեցաւ մեզի, եւ որուն մէջ որոշապէս Վան քաղաքն ու Պիթլիսն ամբողջ, բացի Հէքքիարիէն ու Սղերդի Սանճագէն, Հայաստանի թողուած էին:

Պ. Թէրզիպաշեանի առարկութեան վրայ թէ քարտէսները կրնան փոխուիլ, Նազլեան Գերապայծառ ժողովին ուշադրութեան յանձնեց այն պարագան թէ ճիշդ այս օրերս խոշոր շարժում մը կայ Փարիզի մէջ՝ Ֆրանսայի ապահովելու համար 1916ի գաղտնի Համաձայնութեամբ իրեն տրուելիք բոլոր թրքական հողամասերը, եւ թէ կրնայ ըլլալ որ այս լուրջ շարժման հետեւանքով փոխուին ոչ միայն քարտէսներ, այլ նոյն իսկ այն Հաշտութեան Դաշնագրի նախագիծը որ տրուեցաւ թուրք լիազօրներուն: Յիշատակելով

այս պարագան, Գերապայծառը թելադրեց որ միջոցներ ձեռք առնուին օգտուելու համար այդ շարժումէն, եւ նոր հաւանական արդիւնքներէն բաժին մը ապահովելու համար նաեւ հայկական պահանջմանց:

Պ. Դաւիթ-Բէկ ալ իր կողմէ շեշտեց թէ 1916ի գաղտնի դաշնագրին տրամադրութիւնները յարգել տալու համար Ֆրանսայի մէջ սկսած շարժումը իսկապէս կարելի էր. յայտնեց նաեւ թէ այդ մասին բանախօսութիւններ տեղի կ'ունենան Ընկերաբանական Ընկերութեան սրահին մէջ, թէ հազարաւոր ծանուցումներ որոնք փակցուած են Փարիզ ու գաւառները եւ որոնք կը կրեն ստորագրութիւնը շատ կարելի էր ընկերակցութիւններու եւ մարմիններու, կը յայտարարեն թէ Ֆրանսա անիրաւուած է Թրքական Դաշնագրով, եւ թէ պէտք է Ֆրանսայի վերադարձուին Սուրիան ու Կիլիկիան՝ մինչեւ եփրատ, Խարբերդը իր յարակից հողամասերով մէջն ըլլալու պայմանաւ, հակառակ պարագային՝ չեղեալ նկատելով Դաշնագիրը: Պ. Դաւիթ-Բէկ աւելցուց որ իրեն ալ առաջարկ եղած էր մասնակցիլ այդ բանախօսութեանց, պարզելու համար հայկական տեսակետը, եւ թէ ինք, նկատի առնելով խնդրին փափկութիւնը, զգուշացաւ որոշ պատասխան մը տալէ:

Տ. Զաւէն Պապրիարը. - Կը զարմանամ որ այդքան խոշոր համեմատութիւն մը կը տրուի այդ շարժման, մինչդեռ իրապէս ոչ իսկ թերթերու մէջ յիշատակուած է:

Ի վերջոյ Պ. Դաւիթ-Բէկ հարցուց թէ զինուորական քարտէսը որուն ակնարկած էր Պ. Չօպանեան, ո՞ր պետութեան կողմէ պատրաստուած էր: Պ. Չօպանեանի պատասխանին վրայ թէ Անգլիական զինուորական իշխանութեան կողմէ պատրաստուած էր, վիճաբանութիւնը վերսկսաւ քարտէսներու փոփոխականութեան մասին:

Նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան, իր փորձառութեան վրայ հիմնուելով, յայտարարեց թէ քարտէսները ինքնին նշանակութիւն չունին եւ չեն կրնար հաստատ վաւերագիր մը դառնալ, որովհետեւ յանձնաժողով մը քարտէս մը կը պատրաստէ, ուրիշ յանձնաժողով մը կրնայ յաջորդել անոր եւ տարբեր քարտէս մը պատրաստել: Այդ խնդրին մէջ, յարեց, ակնարկելով Վանայ եւ Պիթլիսի մասին, Պ. Թէրզիպաշեանի կողմէ եղած հարցման, Պատուիրակութիւնը հաւանականաբար չէ կրցած պաշտօնական վաւերագիր մը ձեռք բերել եւ գոհացած է լոկ եղած խոստումներով:

Անդրադառնալով Թրքական Դաշնագրին փոխուելու հաւանականութեան, Նազլեան Գերապայծառ կրկնեց իր խօսքերը, որոնց, ինչպէս նաեւ Պ. Դաւիթ-Բէկի պատասխանելով, Պ. Չօպանեան յայտնեց թէ Ազգ. Պատուիրակութիւնը իր ուշադրութենէն չէ վրիպեցուցած այդ պարագան, եւ կազմած է մասնաւոր յանձնաժողով մը ձեռնհաս անձնաւորութիւններէ՝ ինչպէս Նորատունկեան Էֆէնտի, ՊՊ. Սինապեան, Աճէմօֆ, Չայեան, որպէս զի քննեն Հաշտութեան Դաշնագիրը, որ արդէն վերջնական բան մը չէ, եւ միջոցներ թելադրեն մեզի եղած անիրաւութեանց դարմանման մասին:

Դուրեան Արք.- Դիտել պիտի տամ նաեւ թէ Պատուիրակութեան տեղեկագիրը լուռ կը մնայ Պատուիրակութեան այն անդամներուն նկատմամբ որոնք բացակայ են պաշտօնով, ինչպէս օրինակի համար Բրօֆ. Տէր-Յակոբեանը: Կարելի չէ՞ր տեղեկութիւն ստանալ անոնց գործունէութեան մասին:

Հարցումը երկրորդեց նաեւ Բրօֆ. Թումայեան: Պ. Զօպանեան պատասխանելով յայտնեց այն պատճառները որոնք ծնունդ առին Ամերիկայի կողմէ Հայաստանի ընծայուելիք ելմտական, դիւանագիտական եւ զինուորական աջակցութեանց յոյսէն ու անհրաժեշտութենէն եւ որոնց համար Բրօֆ. Տէր-Յակոբեան, ինչպէս աւելի վերջը զինուորական առաքելութիւնը Ամերիկա գացին: Գալով անոնց գործունէութեան մասին եղած հարցումներուն, Պ. Զօպանեան յայտարարեց թէ Պատուիրակութեան իմացածն ալ սա է որ տակաւին անոնք ձեռք չեն բերուած:

Պ. Տէրպէտերեան.- Դաշնակիցները ճանչցան Հայկ. Հանրապետութիւնը եւ յայտարարեցին թէ սահմանները պիտի որոշեն Թրքական Դաշնագրին խմբագրութեան ժամանակ: Ասիկա չի՞ նշանակեր թէ կ'ընդունէին Հայկ. Հանրապետութեան իրաւասութիւնը թրքական հողամասերու վրայ: Տեղեկագիրը քանի մը անգամներ կը յիշէ թէ այդ ճանաչումը Միացեալ Հանրապետութեան սահմաններու մէջ եղող տէրութեան համար է: Կա՞յ ո՞ւր եւէ հիմք այդպէս ենթադրելու:

Պատասխան տրուեցաւ թէ ճանաչման ֆօրմիլը տարտամ էր, որով կարելի չէ հաստատ բան մը ըսել այդ մասին:

Վիճաբանութեան առարկայ դարձաւ տեղեկագրին այն հատուածը որ Հնդկի իսլամներու կողմէ Թուրքիոյ ի նպաստ կատարուած դիմումին կը վերագրէր յայտնութիւնը այն նոր պայմաններուն որոնք Միացեալ Պատուիրակութիւնը ստիպեցին Ամբողջական Հայաստանի պահանջումէն հրաժարելով նուազագոյն պահանջմանց ծրագիր մը կազմելու:

Բրօֆ. Թումայեան մերժեց այս պատճառաբանութիւնը, դիտել տալով որ Հնդկի պատգամաւորները Լոնտոնի մէջ պարզապէս ճամբու դրուեցան Պ. Լոյտ Ճօրճի կողմէ: Պ. Զօպանեան պատասխանեց որ այդ մասին սխալ հասկացողութիւն մը կայ: Տեղեկագիրը Հնդկի պատգամաւորներու կողմէ Լոնտոնի մէջ եղած դիմումին չ'ակնարկեր, այլ այն դիմումին զոր անցեալ տարի Փարիզի մէջ կատարեցին Պ. Մօնթակիւի առաջնորդութեամբ:

Պ. Թէրզիպաշեան.- Նոյն իսկ Հնդկիները չէին ժխտեր Հայաստանի մը կազմութեան անհրաժեշտութիւնը:

Տ. Զաւէն Պապրիարք.- Բայց այս տարի այդպէս չէին խորհեր. փոխեցին իրենց կարծիքը:

Պ. Ֆնտզեան յայտարարեց այդ առթիւ թէ Ամբողջական Հայաստանի կազմութիւնը անկարելի դարձաւ այն օրէն երբ վերջնականապէս յայտնի եղաւ թէ Ամերիկա չ'ստանձներ հոգատարութիւնը: Պ. Ֆնտզեան յիշեցուց նաեւ որ ատկէ վերջ, այսինքն Ապրիլի սկիզբը միայն, Պ. Լոյտ Ճօրճ յայտա-

րարեց թէ քանի որ յոյս չկայ Ամերիկեան հոգատարութեան մասին, անկարելի պիտի ըլլայ Ամբողջական Հայաստանի մը կազմութիւնը եւ Արեւելքի փշալից հարցին կարգադրութիւնը պիտի մնայ Անգլիոյ եւ Ֆրանսայի:

Յետոյ վիճաբանութիւն տեղի ունեցաւ այն կէտին շուրջ թէ ինչո՞ւ Ազգ. Պատուիրակութիւնը գրաւոր ապահովութիւն չէր ստացած Դաշնակից Պետութիւններէն՝ իրեն եղած խոստումներու մասին: Պատուիրակութեան անդամները որոնք ներկայ էին, բացատրեցին թէ գրաւոր ապահովութիւն ձեռք բերելու բացարձակ անկարելիութիւն կար, եւ յայտնեցին որ եթէ չկան այդ կարգի վաւերագրեր, ատիկա իրենց անփութութեան հետեւանքով չէ: Իրենց բաղձանքն ալ այդ եղած է միշտ, եւ միշտ աշխատած են որ տրուած խոստումները կարելի եղածին չափ ամուր ու դրական հիմերու վրայ դըրուին: Բայց ուրիշ բան է բաղձալ, ուրիշ բան է ստանալ:

Պ. Վահան Թէքէեան.- Արդէն Պատուիրակութիւնը իր դիմումներուն տասէն ինը ստիպուած էր գրաւոր ընել, քանի որ չէր ալ կրնար ուրիշ կերպ ընել, որովհետեւ Պատուիրակութիւնը ընդհանրապէս Փարիզ կը մնար, մինչդեռ դիմումները մասամբ կ'ըլլային Անգլիոյ եւ մասամբ Ամերիկայի, որոնց հետ յարաբերութեան մտնելու գլխաւոր միջոցը գրաւոր դիմումն էր: Միեւնոյն կերպով՝ իր դիմումներէն մէկ մասին պատասխանն ալ գրաւոր կը ստանար: Բայց ոչ անշուշտ այն կարգի գրաւոր խոստումներ՝ ինչպէս փափաք յայտնուեցաւ որ ստացած ըլլայինք: Պատուիրակութեան դիմումներուն կը պատասխանուէր «նկատի կ'առնենք», «կ'աշխատինք» եւայլն ֆորմիւլներով, կամ յոյսեր կը տրուէին, խոստումներ կ'ըլլային, միշտ անորոշ ու թէական: Պատուիրակութիւնը կրնա՞ր ըսել որ խնդրենք, մեզի գրաւոր ապահովութիւն մը տուէք ձեր խոստումներու մասին. ինչպէ՞ս կարելի էր ատանկ պահանջում մը ընել:

Պ. Գ. Յնարգլեան.- Քանի մը հարցումներ ալ ես պիտի ընեմ: Համարատուութեան մէջ յիշատակուած էր թէ Լորտ Քըրզըն 1919 Նոյեմբերին, Ամերիկայի կողմէ հոգատարութեան մերժման հետեւանքով Ամբողջական Հայաստանի մը կազմութիւնը անկարելի դարձած ըլլալը յայտնելով, մասնաւորաբար Կիլիկիոյ մասին խորհուրդ տուած էր որ բանակցինք ուղղակի Ֆրանսայի հետ: Համարատուութիւնը աւելցուցած էր թէ Լորտին յանձնարարութեան վրայ Պատուիրակութիւնը դիմած էր Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան եւ թէ Պ. Պէրթլօ յայտարարած էր որ «մասնաւոր ռէժիմ»ի պիտի ենթարկուին Կիլիկիան եւ այն թրքական հողամասերը որոնք յիշատակուած են 1916ի գաղտնի դաշնագրին մէջ իբր Ֆրանսական ազդեցութեան շրջանակ: Կը փափաքէի գիտնալ նախ թէ ի՞նչ տեսակ բան պիտի ըլլար այդ մասնաւոր ռէժիմը. որովհետեւ մինչեւ այսօր եղածը ուրիշ բան չէ, այլ լոկ վերադարձ մը դէպի ջարդերու եւ արհաւիրքի ռէժիմը: Կը փափաքէի գիտնալ նաեւ թէ Ֆրանսա այդ մասնաւոր ռէժիմին հաստատութեան ակնարկելով կ'ուզէր յայտարարել թէ ձեռք պիտի քաշէ այն հողամասերէն որոնք 1916ի գաղտնի դաշնագրով իրեն թողուած էին, եւ եթէ իրօք պիտի

հրաժարի այդ հողամասերէն որոնք կը տարածուին Կիլիկիոյ ու Վերին Հայաստանի միջեւ, կարելի պիտի ըլլա՞յ անոնց մէջ ապահովել զոր օրինակ Արեւելեան Ռումէլի մէջ երբեմն կիրարկուած վարչական ձեւը, որ որքան ալ թրքական գերիշխանութեան ենթակայ մնար, փոխանցման ձեւ մը պիտի ըլլար եւ օր մը հնարաւոր պիտի դարձնէր այդ հողամասերուն Հայաստանի միացումը, ինչպէս Արեւելեան Ռումէլին միացաւ Պուլկարիոյ: Ուրիշ հարցում մը կ'ուզեմ ուղղել Հայատակութեան փոփոխութեան հարցին նըկատմամբ, որու մասին Դաշնագիրը շատ որոշ տրամադրութիւններ չի պարունակեր, եւ որ շատ մեծ կարեւորութիւն ունի մասնաւորաբար Հայոց համար: Դաշնագրին տրամադրութեան համաձայն, փոքրամասնութեանց պատկանող այն անհատներն որոնք կը փափաքին իրենց հպատակութիւնը փոխել, մէկ տարուան ընթացքին անպատճառ պէտք է փոխադրուին այն երկիրը՝ որուն հպատակ մնալը կը նախընտրեն: Ասիկա ծանր անպատեհութիւն մըն է շատ մարդոց համար որոնք գործ կամ ստացուածք ունին, եւ չեն կրնար մէկ օրէն միւսը ամէն բան լքելով երթալ: Օրինակի համար Իզմիր ծնած, Իզմիր հաստատուած, Իզմիր գործ ունեցող Հայ մը, որ կը նախընտրէ Հայկական հպատակութիւն ընդունիլ, ինչպէ՞ս յանկարծ ամէն բան թողու եւ մեկնի: Կայ նաեւ ուրիշ տեսակէտ մը որ շատ աւելի կարեւոր է անշուշտ: Ի՞նչ պիտի ըլլան այն Հայերը որոնք կը մնան Թուրքիոյ տիրապետութեան թողուած նահանգներուն մէջ, պիտի կրնա՞ն, եթէ փափաքին, Հայկական հպատակ դառնալ: Թէեւ պաշտօնագրին մէջ փոքրամասնութեանց ապահովութիւնը երաշխաւորող տրամադրութիւններ կան, բայց վերջապէս, այս բոլոր անցքերէն ետք, դարձեալ թրքական զարշելի ռէժիմին տակ մնալը հեռանկար մըն է որուն վրայ սոսկումով պիտի խորհի ամէն Հայ: Կ'ուզէի գիտնալ թէ արդեօք Պատուիրակութիւնը ի վիճակի[՞] է այս մասին ալ մեզ լուսաբանելու:

Պ. Չօպանեան. - Պ. Ֆնտգլեանի առաջին հարցման մէջ ակնարկուած հողամասերուն նկատմամբ, Պատուիրակութիւնը միշտ աշխատած է որպէս զի ո՛րեւ պարագային մէջ վերջնականապէս ազատ մնան Թրքական տիրապետութենէն: Երբ պայմաններու փոխուելուն հետեւանքով հնարաւոր չեղաւ ամբողջական միացեալ Հայաստանի կազմութիւնը եւ անկլօ-ֆրանսական 1916ի համաձայնութիւնը իր ոյժը վերստացաւ թէ այստեղ եւ թէ Լոնտոն, Պատուիրակութիւնը բոլոր կարելի միջոցներով ջանաց որպէս զի գոնէ այդ ջրջանակները զորս Հայկական Պետութեան կցելու հնարաւորութիւն չկար այլեւս, չվերադարձուին Թուրքիոյ եւ վայելէն լայն ինքնավարութիւն: Պատասխանուեցաւ թէ դժուար է ինքնավարութեան իրականացումը, բայց նոյն ատեն ապահովութիւն տրուեցաւ թէ բոլորովին Թուրք տիրապետութեան չպիտի թողուին, այլ անոնց մէջ պիտի հաստատուի մասնաւոր ռէժիմ մը որ թէեւ չէ մանրամասնուած, բայց անշուշտ պիտի կրնայ անհետացնել մեր երկիրուները: Կ'ընդունիմ որ այսօր ջարդի ռէժիմ մը կայ լոկ.

բայց ջարդերը բնական դրության մը չեն. անոնց ալ վերջը պիտի գայ: Եւ արդէն ջարդուող մինակ մենք չենք, իրենք ալ կը ջարդուին:

Նորապրունկեան էֆէնդի. - Հիմա գործը ուրիշ գոյն առած է եւ Դաշնագրէն յայտնի կ'ըլլայ որ Կիլիկիան նոյն ձեւով կը վերադարձուի Թուրքերուն, ինչ ձեւով որ կը վերադարձուին միւս վիլայէթները: Դաշնագրին ընծայած ապահովութիւնը լոկ փոքրամասնութեանց վերաբերող տրամադրութիւններն են:

Տ. Զաւէն Պապրիարք. - Դաշնագրին յանձնուելէն երեք օր առաջ Պ. Միլ-րան գլխ վստահեցուց որ թէեւ պիտի քաշուին Կիլիկիայէն, բայց Կիլիկիա միշտ պիտի մնայ Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ եւ այնտեղ պիտի գտնուին Ֆրանսացի պաշտօնատարներ:

Նազլեան Գերապայծառ. - Այդ տեսակ վստահութիւններ մեզի ալ տրուեցան: Կ'ուզէի գիտնալ թէ ի՞նչ կայ գրաւոր որ այդ բոլոր խոստումներուն գործադրութիւնը երաշխաւորէ:

Պ. Թէքէեան՝ վիճաբանութեան ստացած ընթացքին ակնարկելով, յիշեցուց թէ ի բացակայութեան Պատուիրակութեան նախագահին՝ որոշուած էր տեղեկագրին նկատմամբ լոկ լուսաբանութիւններ միայն պահանջել, մինչդեռ կը յուզուին այն տեսակ խնդիրներ որոնց համար անհրաժեշտ է նախագահին ներկայութիւնը:

Պ. Ա. Թէրզիպաշեան. - Ես պարզ լուսաբանութիւն մը պիտի պահանջեմ: Համագումարը անցեալ տարի հոշակեց որ Հայերը իրաւունք ունին բաժին մը ստանալու Գերմանիոյ վճարելիք պատերազմական տուգանքէն: Նոյն իսկ յատուկ յանձնաժողով մը առաջարկ բերաւ այդ մասին, առաջարկ զոր Համագումարը իւրացուց եւ պարտք դրաւ Ազգ. Պատուիրակութեան վրայ՝ այս արդար պահանջումը պսակելու: Այն ատեն՝ այս պահանջման ոյժ տրուեցաւ այն մտածմամբ թէ Թուրքիան չպիտի կրնայ տուգանք վճարել: Այդ նախատեսութիւնը կ'իրականանայ այսօր, ինչպէս կը տեսնուի Հաշտութեան Դաշնագրէն: Թուրքիոյ հասոյթները մեծ մասամբ կը յատկացուին հանրային պարտքին: Ոչ միայն միջոց չունի պատերազմական տուգանք վճարելու, այլ կը կասկածիմ նոյն իսկ որ գրաւման Դաշնակից բանակներու ծախքն անգամ չկարենայ վճարել: Մեր ազգը իր ահաւոր վնասներուն փոխարինութիւնը կրնար ստանալ լոկ Գերմանիոյ վճարելիք պատերազմական տուգանքէն: Համարատուութեան մէջ սակայն այդ մասին ոչ մէկ ակնարկութիւն կար: Այնպէս կը կարծեմ որ Պատուիրակութիւնը՝ ժողովուրդին ենթարկուած անսահման վնասները դարմանելու միակ թանկագին պատեհութիւնը փախցուց, եւ ասիկա՝ հակառակ այն պարտաւորութեան որ այդ մասին դրուած էր իր վրայ: Այս ենթադրութեան կը մղուիմ անոր համար որ երբ պ. Թէքէեան Երեւան եկաւ, հարցուցի իրեն թէ բան մը եղա՞ծ է այդ նըպատակով: Պատասխանեց թէ ոչ: Անկէ ի վեր՝ նոյնպէս ոչինչ եղած է: Եւ այս պարագան ինծի աւելի ցաւալի կը թուէր այնտեղ՝ Կովկասի մէջ՝ ուր աչքի առջեւ ունէի զոր օրինակ Աղեքսանդրաբօլի մէջ համախմբուած թշուառ-

ներու այն խմբաւորումը, բոլորն ալ վնասուած, կորսնցուցած ինչ որ ունէին, անսուաղ, անտուն ու անապաւէն, եւ որոնց ահաւոր վիճակին մէկ դարմանը կրնար ըլլալ այդ վնասուց հատուցման կարգադրութիւնը զոր անտես թողեր է Պատուիրակութիւնը: Բայց ես ուրիշ գանգատ մըն ալ ունիմ այս մասին Պատուիրակութեան դէմ: Այդ թշուառ վերապրողներուն վիճակին դարման մը գտնելու համար դիմում ըրի Պատուիրակութեան, անանկ ատեն մը ուր այնտեղ օրական 20 սայլ չէր բաւեր վայրկեանը վայրկեանին կուտակուող դիակներու փոխադրութեան հասնելու համար: Փաստեր ունիմ թէ այս նամակս հասած է Պատուիրակութեան: Բայց կը ցաւիմ ըսելու որ պատասխան անգամ չստացայ:

Պ. Վահան Թէքէեան.- Անգամ մըն ալ կը յիշեցնեմ որ վիճաբանութեան այս ընթացքը անհրաժեշտ կը դարձնէ Պատուիրակութեան նախագահին ներկայութիւնը:

Պատուիրակութեան նախագահ Պողոս Նուպար փաշա որ ստիպուած էր բացակայիլ հարկեցուցիչ պատճառով մը, այդ միջոցին ժողովասրահ մտած ըլլալով, նախագահ Նորատունկեան էֆէնտի խօսքը տուաւ Պ. Գառնիկ Ֆնտգլեանի, որ կրկնեց իր հարցումներէն առաջինը՝ Կիլիկիոյ եւ առ հասարակ 1916-ի գաղտնի դաշնագրին մէջ Ֆրանսայի թողուած հողամասերու մասին եւ հարցուց դարձեալ թէ արդեօք կարելի՞ է որոշ լուսաբանութիւն մը ստանալ այն մասնաւոր թէժմին նկատմամբ որուն պիտի ենթարկուին այդ հողամասերը, ինչպէս յայտնած էր Պ. Պէրթօ:

Պողոս Նուպար փաշա.- Ես նոյնիսկ աւելի հինէն պիտի սկսիմ անհրաժեշտ բացատրութիւնները այս խնդրին նկատմամբ, 1916ի Լոնտոնի Համաձայնութենէն, որուն կապուած է նաեւ հայ կամաւորականներու լեգէոնին կազմութեան խնդիրը, եւ որ սկզբնակէտն է վերոյիշեալ հողամասերու մասին Ֆրանսայի կողմէ ստանձնուած յանձնառութեանց: Երբ 1916 Դեկտեմբերին Լոնտոն կանչուեցայ, մեզի հաղորդեցին գաղտնի դաշնագիր մը որ կնքուած էր Անգլիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի միջեւ: Դաշնագիրը պատրաստած էին Պ. Ժոռժ Բիքօ եւ Սըր Մարք Սայքս, որուն մահը դժբախտութիւն մը եղաւ մեզի, որովհետեւ մեծ բարեկամ մըն էր Հայոց. եւ այն ձեռով ինչպէս որ խմբագրուած էր, այդ դաշնագիրը կը վճռէր Թուրքիոյ կատարեալ բաժանումը: Պատերազմին հետ՝ իւրաքանչիւր պետութիւն որոշած էր յաղթութեան պարագային իր բաժինը ստանալ Տաճկաստանէն: Ռուսիա կ'ուզէր տիրանալ Պոլսոյ եւ Հայաստանի արեւելեան նահանգներուն: Անգլիա իրեն կը պահէր Միջագետքը եւ Արաբիոյ վրայ գերիշխանութեան իրաւունք մը: Ֆրանսա՝ Սուրիան ու Կիլիկիան, յարակից ծանօթ սահմաններով: Սըր Մարք Սայքս եւ Պ. Ժոռժ Բիքօ յաջողէր էին համաձայնեցնել բոլոր հակամարտ շահերը եւ կազմեր էին վերջապէս այդ դաշնագիրը որուն Հայաստանի վերաբերող մասերը մեզի հաղորդուեցան բերանացի: Գրաւոր բան մը չէինք կրնար պահանջել, անոր համար որ կատարուած իրողութեան մը դէմն էինք, ամէն բան որոշէր, վճռէր էին եւ ապահովաբար անոնց գործադ-

րութեան համար մեր հրամանին չէին սպասեր: Ասիկա իրողութիւն մըն էր որ կրնար որոշ չափով մը խանդավառել մեզ: Կիլիկիան եւ ծանօթ երեք վիլայէթները վերջնականապէս կը փրկուէին թրքական տիրապետութենէն: Բայց ասով չբաւականացանք: Դժբախտութիւն մըն էր մեզի համար որ Հայաստան երկուքի կը բաժնուէր: Կատարուած իրողութեան մը դէմն էինք, ստիպուեցանք ընտրել նուազագոյն չարիքը, խնդրելով որ գէթ Կիլիկիոյ եւ ծանօթ վիլայէթներու շնորհիւ ամենաշատ ինքնավարութիւն մը Ֆրանսայի թեսարկութեամբ: Այս մասին խոստում եղաւ անմիջապէս միշտ բերանացի: Բայց այս խոստումը առանց պայմանի չէր: Կը յիշեմ որ Ֆրանսական դեսպանատան մէջն էինք այդ օրը: Ներկայ էին թէ՛ Պ. Ժոն Բիքօ եւ թէ Սըր Մարք Սայքս: «Ինքնավարութիւն կը պահանջէք, բայց պէտք է ինքզինքնիդ արժանի ցոյց տաք ատոր, Հայերը պէտք է իրենց արինով գնեն իրենց ազատութիւնը»: Բառ առ բառ այսպէս ըսին, պահանջելով կազմութիւնը հայ կամաւորներու լեգէոնի մը որ գործօն մասնակցութիւն մը պիտի ունենար պատերազմին: Առաջարկը փափուկ էր, մանաւանդ վտանգաւոր: Ծանօթ էին մեզի այն ահաւոր ջարդերը որոնք տեղի ունեցած էին Թուրքիոյ մէջ: Բայց տակաւին ահագին թուով Հայեր պատանդ կը մնային թուրքերու ձեռքը: Կրնար ըլլալ որ հայ կամաւորներու մասնակցութիւնը պատերազմին՝ այդ վերապրող Հայոց համար նորէն վտանգի շրջան մը ստեղծէր: Բայց միւս կողմէ Հայաստանի խոշոր մէկ հատուածին՝ ամբողջ Կիլիկիոյ եւ անոր հետ ալ Խարբերդի, նոյն իսկ Սվազի վիլայէթներուն ազատութիւնն ու ինքնավարութիւնը կար: Կարելի չէր արհամարհել այս տեսակ հեռանկար մը եւ փախցնել զայն իրականացնելու առիթը: Ստիպուեցանք ընդունիլ առաջարկը, անշուշտ կարգ մը զգուշական պայմաններով, որոնցմէ գլխաւորն էր կամաւորները յատկացնել լոկ Հայաստանի վերոյիշեալ հատուածին ազատման ձգտող զինուորական գործողութեանց: Այդ միջոցին՝ Եգիպտոսի Ազգային Միութիւնն ալ ֆրանսացի զինուորականներու հետ բանակցութեան մտած էր հայ կամաւորներու լեգէոնի մը կազմութեան համար: Մեր ջանքերը միացուցինք եւ անոնք պսակուեցան մեր ակնկալութիւններէն աւելի, թէեւ կարելի չեղաւ ամբողջովին Երոպա փոխադրել զոր օրինակ Ամերիկայի մէջ արձանագրուած բոլոր կամաւորները, ինչպէս այս մասին կրնայ վկայել Պ. Թէքէեան որ Եգիպտոսի Ազգ. Միութեան կողմէ կը զբաղէր այդ խնդրով:

Պ. Թէքէեան. - 5000 հոգի արձանագրուած էին, բայց անոնց ընծայուած փոխադրութեան միջոցները այնքան անբաւական եղան որ հազիւ 1800 հոգի կրցան գալ:

Պողոս Նուպար փաշա. - Ակնարկած զգուշական միջոցներու համաձայն, կամաւորները մարզուեցան բոլորովին մեկուսի եւ աչքէ հեռու տեղ մը, Կիպրոսի մէջ, Ֆրանսացի սպաներու միջոցաւ, ու վերջէն, ինչպէս յայտնի է, դրկուեցան Սուրիա, զօրավար Ալլէնպիի բանակը, մասնակցելու համար այն գործողութեանց որոնցմէ կախուած էր նաեւ Կիլիկիոյ փրկութիւնը:

Ծանօթ է արդէն թէ ի՞նչ արիութեամբ ու փառքով կատարեցին այդ մասնակցութիւնը: Ատոր փոխարէն ամէնքս ալ կը յուսայինք որ Ֆրանսա պիտի յարգէ իր յանձնառութիւնները: Բայց այդպէս չեղաւ դժբախտաբար:

Քրօֆ. Թումայեան.- Երբոր իրենց կը յիշեցնէք այդ յանձնառութիւնները, ի՞նչ կ'ըսեն, կ'ուրանալ[՞]ն:

Պողոս Նուպար փաշա.- Բնա՛ւ. ընդհակառակը կը խոստովանին թէ իրաւունք ունինք. բայց միւս կողմէ անկարելի կը նկատեն իրենց յանձնառութիւնները գործադրել: Տակաւին քանի մը օր առաջ Պ. Միլրան կ'ըսէր որ այդ յանձնառութիւնները յարգելու համար առնուազն 100.000 զինուոր պէտք է դրկել այնտեղ, ինչ որ այժմ բացարձակապէս անհնար է: Ահա այսպէս տեղի ունեցաւ Կիլիկիոյ ընծայութիւնը ինքնավարութեան խոստումը: Կը կրկնեմ որ բերանացի էր եւ կարելի չէր գրաւորապէս ստանալ: Ապահովաբար դեսպան չէինք որպէս զի այդ տեսակ պահանջում մը ընէինք: Ոչ իսկ Հանրապետութեան կառավարութիւնը գոյութիւն ունէր այդ միջոցին: Ներկայացուցիչն էինք մեծ ազգի մը որ իրեն համար ազատութիւն կը խնդրէր: Բնորոշեցինք միայն մեր պահանջումը թէ ինքնավարութիւն ըսելով չենք ուզեր հասկնալ զոր օրինակ Թունուզի եղածին պէս կարգադրութիւն մը որ աւելի կցում է քան ինքնավարութիւն: Խոստացան այդ ալ, եւ կը հաւատայի որ անկեղծ են իրօք: Այն ատեն՝ վարչապետը Պ. Պրիանն էր: Անցեալ օր երբ իրեն այցելեցի, ոչինչ ուրացաւ ինքն ալ, ինչպէս ոչինչ կ'ուրանայ Պ. Պէրթլօ: Բայց շատ շատ կ'ըսեն թէ գոհացում պիտի տրուի, եւ ասոր պէս կարգ մը տարտամ խօսքեր: Մնաց որ իրենք ալ շփոթած են, իրենք ալ նեղն են, ինչպէս ցոյց կու տան Կիլիկիայէն հասած լուրերը:

Պ. Գառնիկ Ֆնրզլեան.- Կը փափաքէի գիտնալ նաեւ թէ յիշեալ երեք նահանգները, Խարբերդ, Տիարաքէիւր եւ Սվազ միշտ կը մնա՞ն Ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ, եւ եթէ չեն մնար, կարելի պիտի ըլլա՞յ անոնց համար ապահովել ինքնավար ռէժիմ մը:

Պողոս Նուպար փաշա.- Քանիցս պահանջեցինք ատիկա, երբ Ֆրանսա՞ որուն ազդեցութեան շրջանակին մէջ կ'իյնային այդ նահանգները 1916-ի դաշնագրով, լքեց զանոնք: Այս պահանջը ըրինք նաեւ Սան-Բէմօի մէջ: Բայց անօգուտ: Երբ այդ մասին կը խօսէի Լորտ Քըրզընի հետ, ըսաւ որ եթէ ամբողջական Հայաստանը չունեցաք, գոնէ կ'ունենաք Հայկական Պետութիւն մը: Հարցուցի թէ Կիլիկիան ի՞նչ պիտի ըլլայ: Պատասխանեց որ այդ մասին պէտք է խօսինք ուղղակի Ֆրանսայի հետ: Եւ արդէն՝ յարեց, Կիլիկիոյ մէջ ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը իսլամ է: Պնդեցի որ սխալ է այդ ենթադրութիւնը, եւ իսկոյն ծանուցագրով մըն ալ կրկնեցի այս պնդումս, հիմնուելով Ազգ. Պատուիրակութեան վիճակագրութեան վրայ, մանրամասն ցոյց տալով այն իրական համեմատութիւնը որ պատերազմէն առաջ գոյութիւն ունէր Կիլիկիոյ քրիստոնեայ եւ իսլամ բնակչութեանց թւին միջեւ: Լորտ Քըրզըն կրկնեց թէ պէտք չենք մեծ յոյսեր տածել Կիլիկիոյ

մասին եւ թէ իրենց ստացած տեղեկութիւնները բոլորովին հակառակը կը պնդեն: 3–4 օր վերջ ալ, խորհրդարանին մէջ այդ թէզը պաշտպանեց:

Պ. Վ. Թէքէեան.– Նոյն իսկ առասպելական թիւ մը տալով Կիլիկիոյ իսլամ բնակչութեան մասին:

Պ. Ֆնտզլեան կրկնեց նաեւ պահ մը առաջ ըրած հարցումը՝ հպատակութեան փոփոխման խնդրին նկատմամբ:

Պողոս Նուպար փաշա.– Դաշնագրին տրամադրութիւնը որոշ է այդ մասին: Այն անհատները որոնք կ'ուզեն փոխել իրենց հպատակութիւնը, պէտք է երկիրը թողուն տարուան մը ընթացքին, հաստատուելու համար այն երկրին մէջ որուն հպատակութիւնը կը նախընտրեն: Անշուշտ ծանր յօդուած մըն է ասիկա, ծանր մանաւանդ մեզի համար, բայց յօդուած մըն է որ սոսկ Թուրքիոյ Դաշնագրին մէջ գոյութիւն չունի, այլ միեւնոյն կերպով դրուած է նաեւ կնքուած միւս դաշնագիրներուն մէջ: Յետոյ այդ յօդուածը լոկ Հայերուն չի պատկանիր, անոր տրամադրութեան հաւասարապէս ենթակայ կը մնան նաեւ Պուլկարները, Յոյները, Թուրքերը: Մասնաւորաբար Յոյները մեզի չափ պատճառներ ունին անով շահագրգռուելու: Ուզեցինք գիտնալ թէ ի՞նչ կը խորհի այս մասին Պ. Վէնիզէլոս. ըսաւ թէ ինք ընդունած է այդ յօդուածը, որովհետեւ կարելի չէր ուրիշ կերպ վարուի:

Պ. Գ. Ֆնրզլեան.– Կարելի է ըմբռնել այդ տրամադրութիւնը այն անհատներուն համար որոնք թուրքերէն անջատուած հողամասերուն մէջ կը գտնուին: Իսկ անոնք որ Թուրքիոյ մէջ կը մնան, ի՞նչ պիտի ըլլայ անոնց դրութիւնը:

Պողոս Նուպար փաշա.– Կը մնան թրքական հպատակ. ուրիշ բան եթէ ուզեցին մինչեւ տարի մը մեկնիլ եւ հաստատուիլ իրենց նախընտրած տէրութեան մէջ: Բայց նոյն իսկ եթէ Տաճկաստան մնալու ըլլան, Դաշնագրին փոքրամասնութեանց իրաւունքներուն պատկանող յօդուածները բաւական ապահովութիւն մըն են անոնց համար: Ատոնք մեծ բաներ չեն եւ լիովին չեն պսակեր մեր իղծերը: Եթէ Դաշնագիրը չպիտի գործադրուի, ըսելիք չունիմ. այդ պարագային իրապէս ոչ մէկ բան արժէք ունի: Բայց եթէ պիտի գործադրուի՝ գրեթէ Թուրքիա չկայ: Ոչ իսկ պարզ տուրք մը չպիտի կրնայ սահմանել իր սեփական կամքով: Ասով մեծ մասամբ կը նուազի այն անհանգստութիւնը զոր իրաւամբ կը զգանք Թուրքիոյ մէջ մնացած մեր ժողովուրդին դրութեան նկատմամբ:

Պ. Ա. Թէրզիպաշեան.– Հարցում մը պիտի ուղղեմ Պատուիրակութեան: Այն ողբալի վիճակը որուն ենթարկուած է մեր դատը եւ այն ոչ-բաւարար համարատուութիւնը զոր լսեցինք հիմա, ցոյց կու տան որ Պատուիրակութիւնը չէ ունեցած ժողովուրդին ակնկալած գործունէութիւնը: Արդ, Պատուիրակութիւնը որ Համագումարէն բղխած է, հարկ չի՞ տեսներ արդեօք Համագումարին խորհուրդով վարել յետագայ գործերը. թէ ոչ՝ կ'ուզէ դարձեալ ինքնագլուխ շարունակել, ինչպէս կ'ընէ արդէն Համագումարին բացուելէն ի վեր, այսինքն երկու շաբաթէ ի վեր:

Պօղոս Նուպար փաշա ստիպուած ըլլալով անմիջապէս մեկնիլ կարելոր ժամադրութեան մը համար, նախագահ Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան առաջարկեց յաջորդ նիստին քննել Պ. Թէրզիպաշեանի յարուցած հարցը, որուն համար անհրաժեշտ էր Պատուիրակութեան նախագահին ներկայութիւնը:

Ժողովը ընդունեց այս առաջարկը: Նիստը փակուեցաւ ժամը 7ին:

MINUTES OF THE FOURTH SESSION OF THE
ARMENIAN NATIONAL CONFERENCE IN PARIS, IN 1920
(SUMMARY)

VATCHE GHAZARIAN (vatcheg@gmail.com)

This document, published here for the first time, is based on four separate handwritten records obtained from the National Archive of Armenia. These have been consolidated to reconstruct the complete minutes of a key session.

The minute represents the only missing part of an otherwise fully published account of the Armenian National Conference, held in Paris in May 1920. Convened shortly before the signing of the Treaty of Sèvres, the conference brought together delegates to assess the state of Armenian national interests and to chart a course forward—particularly with regard to securing Armenian rights and establishing a unified Armenian state that would include both the independent Republic of Armenia and portions of historical Armenian lands still under Turkish control.

During this pivotal session, delegates from Armenia and the Armenian Diaspora heard a joint report detailing the activities and accomplishments of the Armenian National Delegation and the Delegation of Integral Armenia. This report served as the foundation for subsequent discussions and resolutions.

As such, the recovered minute offers a valuable new lens for understanding, analyzing, and evaluating the Armenian National Conference in a more complete and nuanced way.